2023, ՍԵՊՏԵՄԲԵՐ Բ, ԹԻՎ 18 (638)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

## Կատարվեց Հանրապետական մաղթանք Հայաստանի անկախության տոնի առիթով

Սեպտեմբերի 21-ին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, Սուրբ Գայանե վանքում կատարվեց Հանրապետական մաղթանք:

Հոգևորականաց դասն ու ներկա հավատացյալ ժողովուրդը Հայաստանի Հանրապետության անկախության տոնի առիթով աղոթք բարձրացրին առ Աստված Հայաստանի և Արցախի մեր ժողովրդի խաղաղ, ապահով ու անվտանգ կյանքի համար:

Մաղթանքի ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրապետական ուղերձը հղեց համայն հայ ժողովրդին:

## Տեղի ունեցավ Գերագույն հոգևոր խորհրդի ժողով

Սեպտեմբերի 22-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Գերագույն հոգևոր խորհրդի ժողով, որի ընթացքում քննության առնվեց ս. թ. հոկտեմբերի 1-ին Սրբալույս Մյուռոնի օրհնության արարողության անցկացման հարցը:

Նկատի առնելով Արցախի շուրջ ստեղծված ծանր իրավիճակը՝ որոշում կայացվեց հետաձգել Մյուռոնօրհնեքը և հարակից միջոցառումները:

Որոշվեց նաև հոկտեմբերի 1-ը հռչակել Արցախի համար համազգային աղոթքի օր, որի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում և Հայաստանի ու Սփյուռքի բոլոր եկեղեցիներում հավարտ Ս. Պատարագի կկատարվի աղոթքի հատուկ կարգ:

## Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական ուղերձը Հայաստանի անկախության տոնի առիթով

*Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,*

*Այսօր համախմբվել ենք սրբազան այս կամարների ներքո միասնական աղոթք մատուցելու առ Աստված Հայաստան և Արցախ նվիրական մեր հայրենիքի խաղաղության և մեր ժողովրդի անվտանգ կյանքի համար:*

*Հայոց անկախ պետականության վերակերտման երեսուներկուերորդ տարեդարձը դիմավորում ենք մեծ տագնապների ու անհանգստությունների և նոր կորուստների ցավի մեջ: Մեր մտքերն ուղղված են հայրենի Արցախ աշխարհին, որտեղ տևական ահաբեկումներից, բռնաճնշումներից և ավելի քան ինն ամիսների ամբողջական շրջափակումից հետո Ադրբեջանը ռազմական լայնածավալ գործողություններ վերսկսեց՝ շարունակելով ցեղասպան իր քաղաքականությունը արյունալի ոճրագործություններով:*

*Մեր ժողովուրդն Արցախում այսօր կանգնած է գոյաբանական սոսկալի սպառնալիքների առջև: Հարյուր տարի անց քաղաքակիրթ աշխարհի հայացքի ներքո մեր ժողովուրդը վերստին ճաշակում է դառնությունը ցեղասպանության: Վերստին ազատ ու անկախ կյանքի ու ազգային պատկանելիության համար հայը վճարում է իր կյանքով ու իր արյամբ:*

*Մենք հրաժարվում ենք հավատալ, որ քսանմեկերորդ դարի աշխարհում շարունակում է գործել ուժի իրավունքը, հրաժարվում ենք հավատալ, որ աշխարհի առաջնորդները չեն կարող միջոցներ գտնել կանխելու համար եղեռնագործությունը Արցախում: Մեր կոչն ենք ուղղում միջազգային կառույցներին, բարեկամ պետությունների ղեկավարներին՝ անհետաձգելի և առավել ազդու միջոցներ գործադրելու Ադրբեջանի ցեղասպան գործողությունները կասեցնելու համար: Կոչ ենք ուղղում մեր երկրի իշխանություններին, ազգային կառույցներին, քաղաքական, հասարակական գործիչներին՝ ամեն ջանք ներդնելու արցախահայությանը նոր պատուհասներից փրկելու համար: Ազգային մեր կյանքում երկպառակությունը, կործանարար անտարբերությունը, քաղաքական ներհակությունները, հասարակական բևեռացվածության պատճառով համախմբվելու անկարողությունը նորանոր հարվածներ պիտի հասցնեն մեր ազգին և հայրենի պետականությանը: Մեզ պետք է միաբանություն՝ փորձությունները հաղթահարելու և վերհառնելու համար, անդավաճան հայրենանվիրում՝ պետության անվտանգությունն ապահովելու և հզորանալու համար, պատասխանատվություն ու բարձր գիտակցություն՝ համազգային ու պետական մեր շահերի պաշտպանության և նվիրական իղձերի իրականացման համար:*

*Արցախի հավատավոր սիրելի՛ զավակներ, հայրական Մեր օրհնությունն ու աղոթքն ենք բերում ձեզ և Մեր զորակցությունը հայտնում Արցախի իշխանություններին: Ծանր պատասխանատվության առջև եք կանգնած և, ցավոք, միայնակ եք կրում ձեր տառապանաց խաչը: Մեր ցավն ու վիշտն ընդհանուր է, մեր կորուստների և հայրենի երկրին հասցված դաժան հարվածների դառնությունն ու տխրությունը ամենքիս սրտերում են: Վճռական այս պահին թող Աստված ապավեն լինի, մխիթարի ու գոտեպնդի ձեզ՝ դիմակայելու նեղություններին ու դժվարություններին, և Տիրոջ ողորմությամբ ձեր և ձեր զավակների կյանքի ընթացքը լինի անվտանգ ու ապահով: Այս ծանր իրավիճակում, մեր պատմության փոթորկահույզ ժամանակները հաղթահարած մեր նախնյաց օրինակով, հույսով և հավատով զինվենք ու զորանանք՝ ըստ սաղմոսերգուի խոսքի. «Եթե նույնիսկ անցնեմ մահվան ստվերների միջով, չեմ վախենա չարից, քանզի Դու, Տեր, ինձ հետ ես» (Սաղմ. ԻԲ 5):*

*Սիրելի՛ ժողովուրդ ի Հայաստան, Արցախ և ի սփյուռս, միասնաբար աղոթք բարձրացնենք առ երկնավոր Տերը՝ հայցելով, որ Բարձրյալն Աստված խաղաղության Իր շնորհները հեղի հայոց աշխարհին, ամուր ու հաստատուն պահի հայոց պետականությունը և ազգասիրության ու հայրենասիրության մեջ՝ վճռական ու անսասան մեր ժողովրդին:*

*Տիրոջ սերը, շնորհը և խաղաղությունը թող լինեն մեզ հետ այժմ և միշտ. ամեն:*

*21 սեպտեմբերի, 2023 թ.*

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ
### Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

*Սեպտեմբերի 20-ին* **ՀՀ-ում ԵՄ-ի դեսպան Վասիլիս Մարագոսին**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, ԵՄ-ի նորանշանակ դեսպան Վասիլիս Մարագոսին:

Վեհափառ Հայրապետը, շնորհավորելով ԵՄ-ի դեսպանին նշանակման առիթով, մաղթեց նրան հաջողություններ իր առաքելության մեջ:

Հանդիպմանը Նորին Սրբությունը խոր մտահոգությամբ անդրադարձավ Արցախում տիրող բարդ իրավիճակին և Ադրբեջանի սանձազերծած ռազմական լայնածավալ գործողությունների ծանր հետևանքներին՝ կարևորելով այս պայմաններում արցախահայության ֆիզիկական անվտանգության ապահովումը:

Այս առնչությամբ Հայոց Հովվապետը հույս հայտնեց, որ միջազգային հանրությունը, Եվրամիության անդամ պետությունները և անձամբ ԵՄ-ի դեսպանն ամեն ջանք ի գործ կդնեն կանխելու Ադրբեջանի ցեղասպան քաղաքականությունը:

Իր հերթին դեսպան Վասիլիս Մարագոսը, անդրադառնալով իր առաքելությանը Հայաստանում, կարևորեց նաև Հայ Եկեղեցու հետ երկխոսությունն ու սերտ գործակցությունը՝ ուղղված Հայաստանում տարբեր ոլորտների զարգացմանը, ինչպես նաև տարածաշրջանում խաղաղության հաստատմանը:

➥ էջ 2

## ՀՀ-ում ԵՄ-ի դեսպան Վասիլիս Մարագոսին

➥ էջ 1

ԵՄ-ի դեսպանն Ամենայն Հայոց Հայրապետին տեղեկություններ փոխանցեց Հայաստանում Եվրամիության քաղաքացիական դիտորդական առաքելության կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց նաև Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում հայկական հոգևոր, մշակութային ժառանգության պահպանության խնդիրներին:

## Կաթոլիկ ուխտավորներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնությունից ժամանած կաթոլիկ ուխտավորների՝ առաջնորդությամբ Մոսկվայի Տիրամոր թեմի արքեպիսկոպոս միտրոպոլիտ Պաոլո Պեցցիի:

Հանդիպմանը Հայոց Հայրապետը, իր օրհնությունը բերելով ուխտավորներին, ներկայացրեց Ադրբեջանի լայնամասշտաբ հարձակման հետևանքով Արցախում ստեղծված աղետալի իրավիճակը, որի նպատակն է հայաթափել Արցախը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը նմանօրինակ ցեղասպան գործողությունների պատճառ նկատեց միջազգային հանրության կողմից ոչ համարժեք միջոցների գործադրումն Ադրբեջանի որդեգրած դատապարտելի քաղաքականության կասեցման ուղղությամբ: Վեհափառ Հայրապետն անդրադարձ կատարեց նաև Հայ և Կաթոլիկ, ինչպես և քրիստոնեական քույր եկեղեցիների միջև առկա ջերմ փոխհարաբերություններին ու սերտ գործակցությանը: Այս առնչությամբ Նորին Սրբությունն ընդգծեց, որ եկեղեցիների ու կրոնների համագործակցությունը հիմնական կարևորություն ունի ազգերի միջև խաղաղության և համերաշխության հաստատման համար:

Շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանն ուխտավորներին ընդունելու համար՝ արքեպիսկոպոս Պեցցին իր զորակցությունն ու աղոթքը բերեց հայ ժողովրդին այս ծանր ու դժվարին օրերին:

*Սեպտեմբերի 28-ին*

## Ավստրալիայի խորհրդարանականների պատվիրակությանը

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ավստրալիայի նահանգային խորհրդարանականների պատվիրակությանը՝ գլխավորությամբ պատվիրակության համանախագահներ Հուգ Մըք Դերմոթի և Փիմ Ջեյմսի:

Ողջունելով հյուրերի այցը հայոց հոգևոր կենտրոն՝ Նորին Սրբությունը խոր մտահոգությամբ անդրադարձավ արցախահայության շարունակվող բռնի տեղահանությանը և Ադրբեջանի իշխանությունների կողմից հայորդիների հետապնդումներին: Հայոց Հայրապետն ընդգծեց նաև, որ մեծապես վտանգված է Արցախի հայկական հոգևոր և մշակութային ժառանգությունը՝ հիշատակելով ադրբեջանական իշխանությունների՝ ամբողջ աշխարհի աչքի առաջ Նախիջևանի դարավոր հայկական գերեզմանի շուրջ 6000 խաչքարերի իսպառ ոչնչացումը:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը, անդրադարձ կատարելով Ավստրալիա կատարած իր հովվապետական այցելություններին, գոհունակությամբ արձանագրեց, որ ականատեսն է եղել Ավստրալիայի ժողովրդի ու իշխանությունների՝ հայկական համայնքի նկատմամբ դրսևորվող հոգատար վերաբերմունքին: Այս առնչությամբ Նորին Սրբությունը, հանուն հավատավոր հայորդիների, իր երախտագիտությունը հայտնեց Ավստրալիայի իշխանություններին:

Իր հերթին պատվիրակության համանախագահ Հուգ Մըք Դերմոթը շնորհակալություն հայտնեց Հայոց Հովվապետին Հայաստանի ու Արցախի շուրջ ստեղծված իրավիճակի վերաբերյալ տեղեկատվություն փոխանցելու համար և ընդգծեց, որ առկա մարտահրավերների և սպասվող զարգացումների մասին ամբողջական

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավով անդրադարձավ միջազգային հանրության ոչ համարժեք արձագանքին, ինչը և առիթ տվեց Ադրբեջանին անարգել իրագործել Արցախում իր ոճրագործ և ցեղասպան քաղաքականությունը՝ շրջանցելով միջազգային մարդասիրական բոլոր նորմերը:

պատկերացումն օգտակար կլինի իրենց հետագա հայանպաստ գործունեության ընթացքում:

**Լրատվական նյութերը՝**
**Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի**
**տեղեկատվական համակարգի**

*ԴԱՍԸ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՑ: ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ*

# Կիլիկիայի Կիրակոս Ա կաթողիկոսի գործունեությունը և Զեյթունի ինքնապաշտպանական մարտերը 19-րդ դարի առաջին քառորդին

19-րդ դարի երկրորդ կեսին թուրքական լծի դեմ արևմտահայության ազատագրական շարժման խոշոր դրվագներից է Զեյթունի՝ 1862 թվականի ապստամբությունը: Զեյթունը կամ Ուլնիան և՛ քաղաք էր, և՛ գավառ Լեռնային Կիլիկիայում, մտնում էր Հալեպի վիլայեթի Մարաշի սանջակի մեջ: Զեյթունը հայաբնակ էր, որը 1517 թվականին ընդունեց թուրքական հպատակություն, բայց փաստորեն վարում էր կիսանկախ կյանք. դա ճանաչեց սուլթան Մուրադ 4-րդը (1623–1640)՝ իր հատուկ հրովարտակով, համաձայն որի՝ զեյթունցիներն ունեին իրենց ինքնավարությունը և տալիս էին միայն հարկ (15000 դահեկան Այա Սոֆյայի մզկիթին և նույնքան էլ՝ հայկական եկեղեցուն): Սուլթանի հրովարտակում ասված էր. «Ոչ մեկն իմ հաջորդներեն չպետք է ինքզինքին թույլատրե ավելին պահանջելու Զեյթունի գավառամասեն, որ արժանի է համարված իմ կայսերական շնորհներես օգտվելու»:

Այսպես գրվեց, բայց չկատարվեց թուրքական սուլթանների կողմից: Զեյթունն իր վարչական ինքնավարությունը պահպանում էր անձնուրաց պայքարով: Այնտեղ կար դասակարգային շերտավորում, և տիրապետող էին իշխանները, որոնք էլ կառավարում էին Զեյթունը: Հատկապես հայտնի էին չորս իշխանական տներ՝ Շևրոյանները, Յաղուբյանները, Նորաշխարհյանները (Ենիդունյանները) և Սուրենյանները, որոնց անունով կոչվել են Զեյթունի չորս թաղամասերը:

Զեյթունի բնությունն աչքի էր ընկնում լեռներով, ձորերով, գետերով ու գետակներով, բուսական ու կենդանական հարուստ աշխարհով, աշխատասեր մարդկանցով, որոնցով զմայլված՝ ֆրանսիացի ճանապարհորդ Լեոն Բոլը գրել է. «Նրանց երկրի նման գեղեցիկ երկիր չկա: Մեծամեծ սոճիները, ահագին սոսիները, դալար կաղնիները հաճելի կերպով հանգստություն են տալիս աչքերին, օձի նման գալարվող վտակները, գահավեժ հեղեղատները, ակնակիտ և սառնորակ աղբյուրները հագեցնում են մարդու ծարավը և պահում են կիրճերն ու կածանները մշտադալար դրության մեջ՝ չնայելով արեգակի հրատապ ջերմությանը»:

Զեյթունը բնական լեռնային ամրոց էր, որից և օգտվում էին հայերը՝ իրենց ինքնավարությունը պահպանելու համար: Նրանք հմտորեն օգտագործում էին Պիրիդ լեռան երկաթահանքերը՝ պատրաստելով անհրաժեշտ գյուղատնտեսական գործիքներ, տնային իրեր և զենքեր:

Թուրք կառավարողները չհաշտվեցին Զեյթունի ինքնավարության հետ և բազմիցս փորձեցին զենքի ուժով վերացնել այն, բայց նրանց արշավանքները ձախողվեցին՝ հանդիպելով զեյթունցիների դիմադրությանն ու հակահարվածին: Եվ ինչպես միշտ հայի անկոտրում ոգին ուժով ու հավատքով նորոգել է հայ հոգևորականը՝ ամենածանր պահին անգամ վտանգելով սեփական կյանքը, կանգնելով նրա կողքին: Հերթական մեծ հայրենասերը, անձնուրաց հոգևորականը Սսի Կիրակոս Ա կաթողիկոսն էր, որի հայրենանվեր գործերը մեծ հիացմունք ու ակնածանք են առաջացնում:

1808 թվականին, օսմանյան կառավարության կարգադրությամբ, Մարաշի կառավարիչ Գալանտեր փաշան, մեծ բանակի գլուխ անցած, շարժվում է դեպի Զեյթուն: Քաղաքի բնակիչները և վերնախավը, տեղեկանալով այդ մասին, ոտքի են հանում իրենց աշխարհազորայիններին: Բնակիչները մի մարդու նման զինվում են և պատրաստվում պահպանելու իրենց ծննդավայրը՝ փաշայի զորքերի հարձակումներից: Օսմանյան բռնակալը զեյթունցիներից 30 000 դահեկան հարկ է պահանջում, սակայն լեռնականները հրաժարվում են այն վճարելուց:

Սկսվում է քաղաքի պաշարումը: Պահպանված տեղեկությունների համաձայն՝ այս պաշարումն ավելի խիստ է եղել, քան նախորդ՝ 1780 թվականի Օմեր փաշայինը: Ինն ամիս անհնազանդ լեռնականները մնում են պաշարման մեջ: Թշնամին ամեն քայլի դիմում է՝ Զեյթունը գրավելու համար, սակայն քաղաքը գրավելու նրա փորձերը մատնվում են անհաջողության: Երկարատև պաշարումից հետո քաղաքի բնակչությունն սկսում է նեղվել պարենի պակասությունից: Լավ վիճակի չէր նաև Գալանտեր փաշայի զորքը, որը ինն ամիս շարունակ ստիպված էր նստել քաղաքի մոտ և պաշարման օղակի մեջ պահել այն: Երուստեք հաշտության բանակցություններ սկսելու և այդ դրությանը վերջ տալու ցանկություն է առաջանում: Սկսված բանակցություններն ավարտվում են նրանով, որ լեռնականները խոստանում են վճարել նրա պահանջած 30 000 դահեկան հարկը՝ պայմանով, որ թուրքական զորքերը հեռանան քաղաքից, վերացնեն պաշարումը: Փաշան, թողնելով պաշարումը, հեռանում է Մարաշ: Սակայն, ըստ Զեյթունի պատմագիր Մ. Սեմերճյանի, դրանից հետո զեյթունցիները դրժում են իրենց խոստումը և հրաժարվում հարկ վճարելուց:

➥ էջ 3

# Կիլիկիայի Կիրակոս Ա կաթողիկոսի գործունեությունը և Զեյթունի ինքնապաշտպանական մարտերը 19-րդ դարի առաջին քառորդին

➥ էջ 2

Իմանալով այս մասին՝ փաշան անմիջապես բանտարկում է Սսի կաթողիկոս Կիրակոս Ա-ին, որին մեղադրում է զեյթունցիների ապստամբությունը ոգևորելու և նրանց հետ կապեր ունենալու հարցում: Կաթողիկոսի բանտարկությունը ոտքի է հանում Մարաշի ողջ բնակչությանը, որոնք որոշում են ամեն գնով ազատել նրան: Նրանք կարողանում են 100 000 դահեկան գումար տալ Գալանտեր փաշային և ազատել կաթողիկոսին: Կատարվածի մասին Կ. Պոլսի պատրիարքարանի միջոցով Մարաշի հայությունը կարողանում է տեղեկացնել օսմանյան կառավարությանը, որն էլ, ժողովրդի հուզումներից վախենալով, ստիպված պաշտոնանկ է անում Գալանտեր փաշային և ընտանիքով աքսորում Մալաթիա: Կառավարությունը պահանջում է նրանից նաև հետ վերադարձնել մարաշցիներից վերցրած 100 000 դահեկան գումարը: Գալանտեր փաշան Յուսուֆ անունով մի հրեայից վերցնում է այդ պարտքը և վերադարձնում: Որոշ ժամանակ անց նա չի կարողանում վճարել պարտքը, և աճուրդի է հանվում նրա ողջ ունեցվածքը: Մալաթիա հասնելուց երեք օր հետո Գալանտեր փաշան հանկարծամահ է լինում: Այսպիսի վախճան է ունենում Զեյթունն ինն ամիս շարունակ պաշարման մեջ պահած թուրք բռնակալը:

Այժմ փորձենք առավել մանրամասն ներկայացնել Կիլիկիայի կաթողիկոս Կիրակոս Ա-ի գործունեությունը և նրա կապը զեյթունցիների հետ: Կիրակոս Ա կաթողիկոսի գահակալությունն սկսվում է 1797 թվականի փետրվարի 14-ից և տևում մինչև 1822 թվականի սեպտեմբերի 10-ը: Քառորդ դար կաթողիկոսական աթոռին նստած այդ հոգևորականը մեծ հեղինակություն է վայելել Կիլիկիայի ողջ հայության շրջանում: Մի հետաքրքիր ավանդազրույց է պահպանվել. երբ 1830-ական թվականներին եգիպտոսի փոխարքա Իբրահիմը գրավում է Կիլիկիան, Սսում տեսնում է Կիրակոսի կառուցած կաթողիկոսարանն ու եկեղեցին, ցանկանում է տեսնել նաև այն մարդու գերեզմանը, որը կառուցել էր այդ շինությունները: Գերեզմանի մոտ, իբրև թե, Իբրահիմն ասում է. «Ով Անատոլիայի առյուծ, երանի թե ապրեիր այսօր, երբ Արաբստանի առյուծը կարիք ունի քեզ նման մեծախորհուրդ մի անձի»:

Եթե այս խոսքերն անգամ համարենք մի հորինված պատմություն, այնուհանդերձ, դա վկայում է միայն ու միայն նրա վայելած հեղինակության մասին:

Իր գահակալության 25 տարվա ընթացքում Կիրակոս Ա կաթողիկոսը շինարարական լայնածավալ աշխատանքներ է իրականացնում: Կիլիկյան թագավորության անկումից հետո Սսի կաթողիկոսարանում և առհասարակ քաղաքում քար քարի վրա չէր մնացել, հակառակը՝ եղած հուշարձաններն էլ քայքայվել ու քանդվել էին: Ուստի նրա կատարած այդ քայլն անպայման խոր ազդեցություն պետք է թողած լիներ շրջակա հայ բնակչության վրա:

Երևանի Մատենադարանում պահպանվել է Կիրակոս կաթողիկոսի՝ 1818 թվականին Կոստանդնուպոլիս՝ Գրիգոր և Սարգիս Չելեպիներին գրված մի նամակը, որտեղ նա իրեն համարում է «յետին ծնունդս թագաժառանգ տոհմին Ռուբինեանց»: Նույն նամակում կաթողիկոսը նշում է. «....և որովհետև ուսումն իմաստից և գիտութեանց՝ որ ի վաղ ժամանակս լուսափայլ ցոլանար յաշխարհիս Կիլիկիոյ յօրէ բառնալոյ թագաւորութեանս մերոյ աղոտացեալ և յոյժ, և գրէ թե շիջեալ, այժմ յուսալով ի խնամս վերին գթութեան տեսչութեան այժմ ճգնիմ ջանամ ածել կարգել ուսեալ դաստիարակս և վարժապետս ի հիանալի, զարմանալի շնորհատու նորաշէն սուրբ Աթոռոյ և ի նորակերտեալ դպրոցիս, որպէսզի մանկունք ուխտիս սրբութեան զարգասցեն և հրահանգս գիտութեան և ի սէր ճշմարտութեան»:

Ինչպես երևում է, կաթողիկոսի նպատակն է եղել շինարարական աշխատանքներ ծավալելու հետ մեկտեղ կրթել ազգի մանուկներին, դաստիարակ ուսուցիչներ պատրաստել, որոնք կարող էին ազգի զավակների կրթության ու դաստիարակության հարցերով զբաղվել:

Սակայն Հալեպի բդեշխը նրա վրա ամբաստանություն է գրում, որ, իբր թե, նա լուրջ կառուցումներ է անում Սիս քաղաքում, կապեր ունի ապստամբ ուլնեցիների հետ, ցանկանում է ապստամբել օսմանյան կառավարության դեմ, և նրա կառուցումներն ունեն հենց այդ նպատակը: 1819 թվականի ապրիլին կաթողիկոսը կանչվում է սուլթանների մայրաքաղաք՝ բացատրություն տալու առաջադրված մեղադրանքների կապակցությամբ: Նա մեղադրվում էր նաև Մոսկվայի ցարի հետ կապեր ունենալու մեջ, իսկ բերդի կառուցումները, իբր, իրականացնում է 40 000 կազակներին տեղավորելու համար: Կաթողիկոսը մինչև 1820 թվականը մնում է Կ. Պոլսում: Օսմանյան կառավարության կողմից կազմվում է հատուկ հանձնաժողով, որը մեկնում է Սիս՝ ուսումնասիրություններ կատարելու: Արդյունքում կաթողիկոսի դեմ ոչինչ չեն գտնում, նա արդարացվում և վերադառնում է Սիս:

Պատմագիրները վկայում են, որ կաթողիկոսի միջնորդությամբ Զեյթունի հարկը 30 000 դահեկանից իջեցվում է 20 000-ի, այնուհետև՝ 15 000-ի:

Այժմ այն մասին, թե կապ ունե՞ր, արդյոք, կաթողիկոսը Զեյթունի ազատագրական շարժումների հետ: Ուսումնասիրելով դեպքերի զարգացումները, պատմական աղբյուրները՝ կարող ենք փաստել, որ կաթողիկոսը միանշանակ կապ է ունեցել զեյթունցիների հետ: Հենց այն, որ Գալանտեր փաշան Զեյթունի պաշարումից հետո անմիջապես ձերբակալում է նրան, վկայում է, որ կաթողիկոսը ոգևորել է ըմբոստներին:

Ինչ վերաբերում է շինարարական աշխատանքների իրականացմանը, ապա, ինչպես վկայում է Ա. Պերպերյանը, կաթողիկոսն ունեցել է օսմանյան կառավարության թույլտվությունը: Հարց է ծագում. եթե այդպես է, ապա ինչու պետք է կաթողիկոսը երկու տարի մնար Կ. Պոլսում: Կրկին Ա. Պերպերյանի վկայությամբ՝ նրա դեմ արված ամբաստանությունը բխում էր իր իսկ նամակից, որտեղ կաթողիկոսը հիացմունքով է խոսել զեյթունցի ըմբոստ լեռնականների մասին: Պահպանվել է նաև զեյթունցի Դելի քեշիշին ուղղված նրա կոնդակը, որը նույնպես հավաստում է, որ կաթողիկոսը մանրամասն տեղեկություններ է ունեցել Զեյթունում կատարվող բոլոր իրադարձությունների մասին և ոգևորել է Տավրոսի լեռնականներին թուրքական ուժերի դեմ մղած նրանց պայքարում: Անհերքելի փաստ է, որ հայրենասեր կաթողիկոսը սերտ կապեր է ունեցել զեյթունցիների հետ և ոգևորել ու գոտեպնդել է նրանց 1808 և 1819 թվականների ինքնապաշտպանական մարտերի ժամանակ:

Այսպիսով՝ 19-րդ դարի առաջին քառորդին՝ 1808 և 1819 թվականներին, զեյթունցիները կարողացան հետ մղել թուրքական կառավարության հրամանով կազմակերպված երկու արշավանքները և դրանով իսկ պահպանել իրենց կիսանկախությունը՝ մնալով նորից ինքնավար դրության մեջ:

**Անուշ ԱՂԱՍԱՐՅԱՆ**

*ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԸ*

# Ամարասի վանքը

***Վանքի պատմությունը:*** Արցախի անմատչելի բարձունքներում ավելի քան երկու հազար տարի հայ ժողովուրդը դիմակայել է բազում թշնամիների գրոհների՝ անձնազոհաբար պահպանելով իր ազգային ինքնությունն ու մշակույթը: «Արցախը ոչ թե պարզապես քրիստոնեության կղզյակ է, այլ քրիստոնեական պատմության ակունք»,– 2013 թ. այցելելով Արցախի Հանրապետություն՝ նկատել է օպերային աստղ Մոնսերատ Կաբալյեն:

Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության եզակի արժեքներից և քրիստոնեական քաղաքակրթության բնօրրաններից մեկն Ամարասի վանքն է: Վանքի պատմությունն սկզբնավորվում է Արցախում և Ուտիքում քրիստոնեության տարածման առաջին պահերից: Վանքը գտնվում է Արցախի Մարտունու շրջանի Մաճկալաշեն գյուղի մոտ՝ Խազազ և Լուսավորիչ սարերի միջև ընկած գոգահովտում, և հնում մտել է Մեծ Հայքի Արցախ նահանգի Մյուս Հաբանդ գավառի մեջ: Ամարասի տեղանվան ծագման հետ կապված տարբեր տեսակետներ կան, որոնցից մեկի համաձայն՝ անվան ծագումնաբանությունը կապվում է հայոց հեթանոսական դիցարանի գերագույն աստծո՝ Արամազդի հետ՝ ժամանակի ընթացքում վերափոխվելով Ամարազի կամ Ամարասի:

Մեկ այլ ավանդազրույցի համաձայն՝ մեր արևապաշտ նախնիների պատկերացումով՝ տարին մեկ անգամ արևը մերձենում է Ամարասին և Արցախի սարուձորերում այնքան ջերմություն սփռում, որ ամբողջ տարին սառնամանիք չլինի: Արեգակի հանգրվանի այդ վայրն արցախցիները կոչել են «ամ արև աստ», այսինքն՝ տարվա արևը այստեղ: Հետո հնչունափոխվելով՝ Ամարևաստ տեղանունը դարձել է Ամարաս:

Ենթադրվում է, որ վանքի տեղում ժամանակին եղել է հեթանոսական տաճար, որի փլատակների վրա էլ Հայոց առաջին կաթողիկոս Գրիգոր Լուսավորիչը 4-րդ դարում կառուցել է Ամարասի վանքը: Վանքի շինարարությունն ավարտին է հասցրել Լուսավորչի թոռ Մանուկ Գրիգորիսը, որը դեռևս շատ երիտասարդ հասակում՝ պապի կողմից եպիսկոպոս ձեռնադրվելուց հետո, ուղարկվել է Հյուսիսային Կովկաս՝ Մազքութաց երկիր, որպեսզի քրիստոնեություն քարոզի: 7-րդ դարի պատմիչ Մովսես Կաղանկատվացին հենց Գրիգորիսին է վերագրում այստեղի բոլոր եկեղեցիների կառուցումը՝ ընդհուպ մինչև Ատրպատական (Իրանի ներկայիս Ադրբեջան նահանգը):

Ամարասն առավել հայտնի է դառնում 4-րդ դարի կեսերից, երբ այնտեղ թաղում են Գրիգորիսին: Ավանդության համաձայն՝ 338 թ. մազքութները Գրիգորիսին, քրիստոնեական դավանանք քարոզելու համար տանջահարելով, կապել են կատաղած ձիու գավակից և քարշ տալով սպանել: Գրիգորիսի աշակերտները նահատակված եպիսկոպոսի մարմինը բերել ու ամփոփել են Ամարասի վանքում:

5-րդ դարում՝ Վարդանանց պատերազմի օրերին, Ամարասի վանքն ավերվել է պարսիկների կողմից, քանի որ պարսից մոլեռանդ մոգերը չէին հանդուրժում իրենց երկրին այդքան մոտ քրիստոնեության գործող օջախի գոյությունը: Ըստ Մովսես Կաղանկատվացու՝ 489 թ. Առանշահիկ արքա Վաչագան Գ Բարեպաշտը գտնում է Գրիգորիսի՝ արդեն մոռացության մատնված գերեզմանը և հրամայում գերեզմանի վրա մատուռ հիմնել՝ Սուրբ Գրիգոր անունով, ինչպես նաև վերականգնել Գրիգոր Լուսավորչի կառուցած եկեղեցին: Հենց այդ մատուռն էլ, գրեթե առանց փոփոխության, պահպանվել է Ամարասի վանքի եկեղեցու զոհասեղանի տակ: Հետագայում բազմաթիվ վերակառուցումների հետևանքով անմիջապես մատուռ-դամբարանի վրա կառուցվել է եկեղեցի:

5-րդ դարից սկսած՝ Ամարասը դառնում է երկրամասի կրոնական խոշոր կենտրոններից մեկը՝ եպիսկոպոսանիստ բնակավայր: Հենց այստեղ է հայոց գրերի գյուտարար Մեսրոպ Մաշտոցը բացում Արցախի առաջին դպրոցը՝ դրանով իսկ էլ ավելի ամրապնդելով քրիստոնեության հիմքերն Արցախ-Ուտիքում: Ըստ պատմաբան Լեոյի՝ Արցախում դպրոցներ բացելով՝ Մաշտոցը հարավում հասնում է մինչև Դիզափայտ (այժմ՝ ԱՀ Հադրութի շրջան), իսկ հյուսիսում՝ մինչև Մեծառանց գավառ (Խաչենի մելիքություն, ԱՀ Մարտակերտի շրջան): Վանքի տարածքում կառուցվում է նաև մոտ 36 այլ կառույց, որոնք ծառայում էին որպես վարչական շենքեր ու բնակատեղիներ:

Նույնիսկ Ամարասի ճարտարապետական տեսքը վկայում է, որ վանքը դարերի ընթացքում պատերազմներ շատ է տեսել: Այն կառուցվածքով պարսպապատ մի ամրոց է, որտեղից արցախցի զինվորականներն ու շինականները պայքար են մղել օտար զավթիչների դեմ: Հիմնադրումից ի վեր վանքը բազմիցս ենթարկվել է ավերածությունների. ավերվել, բայցև վերհառնել է ու շենացել կրկին: Ըստ հայտնի ժողովրդական մի ավանդության՝ հերթական բռնակալ Լենկ Թեմուրը հիմնահատակ կործանում է գյուղաքաղաքը, և որպեսզի վանքն այլևս չվերականգնվի, նրա հրամանով՝ զորքը շարքով տեղակայվում է մինչև Երասխի ափը, ու զինվորները, վանքի քարերը միմյանց փոխանցելով, թափում են գետը: Սակայն ամեն անգամ, երբ ասպատակիչները հեռանում էին գավառի սահմաններից, վանքն իր նախկին շուքով վերստին հառնում էր ավանդական տեղում: Արաբական ավերիչ արշավանքները նույնպես չշրջանցեցին Արցախն ու Ամարասը: 821 թվականին ողջ Արցախի հետ մեկտեղ Ամարասը ևս գրավվեց արաբների կողմից, իսկ երբ խալիֆայության ներսում սկսվեց իշխանության համար պայքար, Աղվանքին, որի կազմում էր նաև Արցախը, հաջողվեց ազատագրվել: Ամարասը կրկին վերականգնվեց Դիզակի իշխան Եսայի Աբու-Մուսեի ջանքերով: ➥ էջ 4, 8

# Ամարասի վանքը

↩ էջ 3

13-րդ դարում արդեն վանքը ենթարկվել է մոնղոլ հրոսակների ասպատակությանը: 1293 թ. թաթար Բաթու խանը կողոպտում է վանքը՝ որպես ավար տիրանալով Սուրբ Գրիգորիսի գավազանին ու 36 ակներով ընդելուզված ոսկեձույլ խաչին, որի ամեն մի ակն պատկերում էր հայկական այբուբենի մի տառը: Հետագայում Արցախի վարպետները պատրաստել են հայատառ 36 նոր ակն և տեղադրել Ամարասի շրջակայքի 36 քերծերի ճակատներին: Ավելի ուշ թաթար զորապետերից մեկի կնոջ՝ հույն արքայադուստր Դեսպինի խնդրանքով խանը խաչն ու գավազանն ուղարկեց Կոստանդնուպոլիս:

Վանքը նոր ավերածությունների ենթարկվեց 1387 թվականին՝ Լենկթեմուրի արշավանքների ժամանակ: Բայցևայնպես, չնայած բոլոր փորձություններին, Ամարասը երբեք չի դադարել գործել որպես դպրոց՝ շարունակելով մնալ Արցախի հոգևոր կենտրոնը: Միաժամանակ 5—16 դարերում, թշնամիների անընդհատ արշավանքների պայմաններում, Ամարասի վանականներն ստեղծել են արժեքավոր բազմաթիվ ձեռագրեր:

15—16-րդ դարերում, Պարսկաստանի տիրապետության կազմում, վանքը շարունակում էր լինել որպես Վարանդայի մելիքության եպիսկոպոսական կենտրոն: Այստեղ գրի են առնվում արժեքավոր բազմաթիվ ձեռագրեր:

17-րդ դարում վանքը հիմնովին վերակառուցվում է Գանձասարի Պետրոս կաթողիկոսի հրամանով, իսկ տեղի եպիսկոպոսների համար ամառանոց հանդիսացող Հերհեր գյուղում կառուցվում է 1667—1676-ով թվագրվող, Սուրբ Գրիգորիսի անունը կրող նոր եկեղեցի:

Պարսկական տիրապետության տակ, Խամսայի մելիքության տարիներին, Նադիր շահ Աֆշարի կառավարման ժամանակ Վարանդայի մելիք Շահնազար II-ը ձեռնարկում է տաճարի բարեկարգման աշխատանքները: Անվտանգության ապահովման նպատակով վանքը պարսպապատվում է՝ դառնալով ամրոց: Կառուցվում են նաև մի շարք սենյակներ, խցեր, օժանդակ այլ շինություններ: 19-րդ դարի երկրորդ կեսին, Ռուսական կայսրության կազմում, Ամարասի վանական համալիրն օգտագործվում էր որպես սահմանային ամրոց, իսկ 1832—1844 թթ.՝ որպես ռուս-պարսկական մաքսակետ: Այստեղ էին իջևանում Արևելքից դեպի Ռուսաստան ու Եվրոպա գնացող քարավանները: Այս ժամանակահատվածում վանքն անմարդաբնակ էր: Գիտնական, վարդապետ Սարգիս Ջալալյանցը նշում է, որ իր առաջին այցելությունից հետո բավականին փոփոխություններ են կատարվել. եկեղեցին այն աստիճանի էր վնասված, որ անհրաժեշտ էր այն ամբողջովին վերակառուցել: Եվ արդյունքում հին եկեղեցու տեղում կառուցվում է բոլորովին նոր համակազմով եկեղեցի: Իսկ մինչ այդ՝ 1848 թվականին, Գանձասարի թեմական Տեր-Բաղդասարը ցարական իշխանություններից կարողանում է ստանալ Ամարասը հայկական Առաքելական Եկեղեցու տիրույթ վերադարձնելու իրավունքը:

Ամարասի վանքի վերջին հիմնովին վերանորոգումը կատարվեց 1858 թ. Շուշիի հայ բնակիչների միջոցներով: 1898 թ. շուշեցի ճարտարապետ Միքայել Տեր Իսրայելյանը պատրաստեց Գրիգորիսի դամբանաքարը, որը տեղադրվեց եկեղեցու հյուսիսային հատվածում: Վանքն այդ շրջանում տիրապետում էր կալվածքների, վարելահողերի, այգիների, ուներ ջրաղաց: Վանքից հարավ՝ Ամարաս գետի աջ ափի զառիթափին, երևում են շինությունների հետքեր, հանդիպում են բրուտագործական խողովակներ և գերեզմանաքարեր: Դրանք, հավանաբար, Ամարաս բնակավայրի ավերակներն են:

Այսպիսով՝ ամեն անգամ ավերվելուց հետո Ամարասը ջանասիրությամբ վերականգնվել է, և շուրջ 14 դար վանքում ողողանջել են հայկական զանգերը, հնչել հայերեն աղոթք ու շարական: Միաժամանակ ափսոսանքով պետք է նշել, որ յուրաքանչյուր վերակառուցման ընթացքում վանքի հին արձանագրությունների մեծ մասը ոչնչացվել է:

Խորհրդային Ադրբեջանի կազմում Արցախի բոլոր եկեղեցիների նման Ամարասում դադարեց վանական գործունեությունը, և միայն արցախյան վերազարթոնքի շնորհիվ 1990 թվականի սեպտեմբերի 7-ից նորից սկսեցին ղողանջել վանքի զանգերը: Արցախյան առաջին պատերազմի տարիներին եկեղեցու շենքը լրջորեն վնասվեց, բռնազավթվեց ու ազատագրվեց և 1992 թվականին ի վերջո հայտարարվեց Արցախի թեմի գործող եկեղեցի՝ գործելով մինչև 2023 թվականի Արցախի հայաթափումը:

Առաջին պատերազմի ժամանակ ադրբեջանցի հատուկ ջոկատայիները ջարդել են նաև Գրիգորիսի տապանաքարը: 2000 թ. վանական համալիրում պատրաստվեց տապանաքարի կրկնօրինակը, և այդուհետ ներկայացվում էր երկու տապանաքար: 19-րդ դարի տապանաքարը ցուցադրվում էր եկեղեցու ներսում՝ մուտքի մոտ, իսկ նոր տապանաքարը տեղադրված էր դամբարանում՝ եկեղեցու խորանի տակ:

Ամարասի պաշտպանության ժամանակ ունեցել ենք նաև զոհեր: Այսպես՝ պատերազմի օրերին, երբ հերթական անգամ թշնամին փորձում է գրավել վանքը, քանդել եկեղեցու մասունքները, Սոսի և Մաճկալաշենի երիտասարդները, լսելով այդ մասին, շտապում են պաշտպանել վանքը: Հայ երիտասարդներին հաջողվում է թույլ չտալ թուրք հրոսակների հերթական վանդալիզմը: Այդ բախման ընթացքում Սոս գյուղից Վաչագան Հայրապետյանը զոհվում է, ընկերները՝ գերեվարվում:

2019 թվականին սկսվեցին վանական համալիրի լիարժեք վերականգնման աշխատանքները, սակայն 2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո՝ նոյեմբերի 9-ի եռակողմ համաձայնագրի արդյունքում, հայ-ադրբեջանական շփման գիծը կանգ է առնում Ամարասից 800—1000 մետր հեռավորության վրա, և Արամասը հայտնվում է շփման գծում: Այնուհանդերձ, չնայած վտանգներին ու խոչընդոտներին (վանք այցելել հնարավոր էր միայն ռուս խաղաղապահների ուղեկցությամբ), վանքը շարունակում էր ապրել և ապրեցնել հավատացյալ ժողովրդին: Վանքի՝ թշնամու ուղիղ նշանառության տակ լինելու հանգամանքից այցելուների հոսքը չէր դադարում: Նոր վանահայրը Տեր սեպուհ քահանա Հակոբյանն էր, որին վիճակվեց լինել Ամարասի վերջին վանահայրը:

2020 թվականից ի վեր վանքի պատերին ծածանվող ռուսական դրոշը խախաղություն չբերեց ոչ Ամարասին և ոչ էլ Արցախին: Ադրբեջանը շարունակեց Ամարասի բռնազավթման փորձերը: 2021 թվականի սեպտեմբերի 21-ին ադրբեջանցի զինվորականներն իրենց դիրքերը 1200 մետրով առաջ են մղում Մաճկալաշենի ուղղությամբ՝ վանքի պարիսպների մոտ տեղակայելով ադրբեջանական դրոշը: Այդ ժամանակ դեռևս հաջողվում է խաղաղապահների միջնորդությամբ դրոշը հեռացնել: Սակայն թշնամու ոտնձգությունները շարունակվում են, և 2023 թվականի սեպտեմբերի 19-ին սկսված ադրբեջանական ահաբեկչական նոր պատերազմի արդյունքում ողջ Արցախն անցնում է թշնամու տիրապետության տակ, այդ թվում՝ Ամարասը:

Վանքի վերջին օրերին Ամարասը լքված չէր. պահակը՝ մաճկալաշեցնի Կառլեն Հովհաննիսյանը, անգամ ամենաուժեղ ռմբակոծությունների օրերին ոտքով հասնում էր վանք՝ հավատարիմ մնալով իր ստանձնած գործին: Վանքի քահանան, առողջական խնդրով Հայաստան մեկնելով, շրջափակման պատճառով չէր կարողացել վերադառնալ: Անկանխատեսելի բռնագաղթի խառնաշփոթի մեջ Ամարասի սրբազան մասունքների փրկության մասին հոգ չտարվեց: Արդյունքում և՛ Ամարասը, և՛ Արցախի հինավուրց մյուս վանքերն իրենց նյութական և ոչ նյութական արժեքներով մնացին բարբարոս թշնամու վերահսկողության տակ:

**Վանքի կառուցվածքը:** Վանքը կառուցված է հարթ տեղանքում և ունի կանոնավոր ուղղանկյուն հատակագիծ՝ ընդհանուր մոտ 0,5 հա (59 × 85 մ) տարածքով: Վանքը շրջապատում են հրակնատներով բարձր պարիսպներ, որոնց ներսից ողջ պարագծով կից գտնվում են բնակելի և օժանդակ շինություններ: Եկեղեցու երկու ներքին բակերն անջատվում են բնակելի խցերի շարքով: Արևելյան հատվածն ուներ զուտ տնտեսական նշանակություն. այստեղ էին տեղավորված վանքի գոմը, ախոռը, մթերանոցները:

Արևմտյան՝ ավելի ընդարձակ բակի կենտրոնում գտնվում է Ս. Գրիգորիսի եռանավ բազիլիկը՝ երկու զույգ մույթերով: Ամարասի վանքի համալիրում հայ արվեստի ու ճարտարապետության պատմության համար ամենաարժեքավորը և հետաքրքրականը Գրիգորիսի դամբարանն է: Ողջ դամբարանը շարված է մոտակա Խազազ լեռան մաքուր տաշած քարերից: Դամբարանն իրենից ներկայացնում է եկեղեցու բեմի տակ կառուցված, միանավ, թաղածածկ փոքր դահլիճ, որը մուտք ունի աղոթասրահի հարավարևելյան անկյունից՝ ավանդատան դռան առջևից:

Վեց աստիճան ցած գտնվում է դամբարանի նախամուտքը, որտեղ բացվում է 3 մ երկարությամբ արևմուտքից արևելք ձգված թունելանման տարածություն, որտեղ ևս կա 7 աստիճան:

Նախամուտքի արևելյան ճակատն ունի երեսակալով լուսամուտաձև խորշ, իսկ բացվածքի պայտաձև վերջավորության շուրջը փորագրված է հնգաշերտ գոտի, որը երկու կողմից հորիզոնական ձգվում է մինչև ընդերկայնական պատերին հատվելը: Խորշի երկու կողմում քանդակված է մեկական արմավենի: Հարավային կողմի արմավենին լավ է պահպանված, իսկ հյուսիսայինի վերին մասը ջարդված է, սակայն ստորին մասը հուշում է, որ այն իր ձևով առաջին արմավենու կրկնությունն է եղել: Նախամուտքի պատերի պարագծով՝ թաղի հիմքի բարձրությամբ ձգվում է երկրաչափական միևնույն զարդանախշի կրկնությամբ փորագրված քանդակապատ գոտի: «Ոսկե հատման» համաչափություններով (8 × 13 սմ) ուղղանկյուն զարդաքանդակն անկյունագծերով բաժանվում է 8 հավասար եռանկյունիների:

Նախամուտքից դուռ է բացվում դեպի դամբարանի թաղման խուցը: Դռան ուղղանկյուն բացվածքի մեջ, պատի հաստության հաշվին, կա երեք աստիճան, որ իջնում է մինչև դամբարանի հատակը: Հարավային դռան դիմաց՝ հյուսիսային պատի արևելյան ծայրում, մի այլ դուռ կա, որը տանում է դեպի դամբարանի երկրորդ մուտքը, որն իր ձևով և չափերով առաջինի կրկնությունն է և լուծված է նրան համամասն: Սակայն վերջին վերակառուցման ժամանակ այս մուտքը փակվել է և կիսով չափ հողով լցվել: Ուսումնասիրության համար մատչելի են միայն նախամուտքի արևելյան պատը՝ բարձրության կիսով չափ, նրա առջևի ուղղանկյուն հարթակը և դեպի վեր տանող հինգ աստիճանները:

Դամբարանի հյուսիսային մուտքը հավանաբար փակվել է մինչև Ամարասի եկեղեցու՝ 19-րդ դարի վերակառուցումը, որովհետև դրանից հետո այցելողները նրա առկայության մասին չեն հիշատակում: Ինչ վերաբերում է այդ երկու մուտքերի նախնական ձևերին՝ երկարությանը և աստիճանների քանակին, ապա պարզվում է, որ սկզբնական հորինվածքի նախամուտքերն ունեցել են ընդամենը հինգ աստիճան: 19-րդ դարի վերջին այցելուները հիշատակում են արդեն 18 աստիճանի առկայությունը, որը պայմանավորված է վերակառուցման ժամանակ եկեղեցու հատակի նիշի զգալի բարձրացմամբ: Դամբարանն արևելյան կողմում ավարտվում է պայտաձև կամարով ծածկված նեղ և երկար խորշով (0,96 x 1,28 մ): Խորշն արևելքից փակված է անմշակ քարի և խճի շարվածքով, սակայն պարզ երևում է, որ այն շարունակվում է կրաբետոնի զանգվածից այն կողմ ևս: 1961 թվականին եկեղեցու արևելյան ճակատի հիմքերը դրսից պեղելիս այդտեղ հայտնաբերվել են դեպի դամբարան տանող աստիճաններ:

Խորշը, հետևաբար և դամբարանի արևելյան մուտքը փակվել են 19-րդ դարում այժմյան եկեղեցին կառուցելիս: Գրիգորիսի դամբարանը կառուցված է նույն հորինվածքով, որը հատուկ է Էջմիածնում Գայանեի և Օշականում Մեսրոպ Մաշտոցի 5-րդ դ. դամբարաններին: Եվ Ամարասի, և՛ Օշականի 5-րդ դարի դամբարաններն ունեն նույն հորինվածքը՝ ուղղանկյուն թաղածածկ սրահ, արևելքում՝ խորշ, արևմուտքում՝ բացվածք, հյուսիսային և հարավային պատերում՝ համաչափ տեղադրված զույգ մուտք, ընդ որում՝ երկու դամբարաններն էլ կիսագետնափոր են:

Հայաստանի վաղ միջնադարի հուշարձանների հետազոտողները նշում են նաև դրանց ընդհանրությունները սիրիական նույնատիպ կառույցների միջև: ➥ էջ 8

*ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԸ*

# Յակոբ Պատրիարք Նալեան. Քրիստոնէական ուսմանելի

*Սկիզբը՝ թիւ 9–17*

### Առաջին հարցում. Սուրբ Հոգիին եօթը պարգեւներուն մասին

Սուրբ Հոգիին պարգեւները Աստուծոյ մարմնացեալ Բանին կողմէ ընծաներ ու նուէրներ են, որ երկինքէն Իր հարսին՝ Եկեղեցւոյ բերաւ իբրեւ օժիտ ու զարդ: Անոնք պարգեւներ կ'ըսուին, որ կը տրուին տուողին առատաձեռնութենէն, մեծհոգութենէն եւ ո՛չ թէ ընդունողին արժանաւորութենէն: Այս պարգեւները եօթն են, որովհետեւ մահացու մեղքերը եօթ հատ են, որոնք այս եօթ պարգեւներով կ'արտաքսուին:

Սուրբ Հոգիին առաջին պարգեւը Երկիւղն է, որ հպարտութիւնը կ'արտաքսէ:

Երկրորդ պարգեւը Գթութիւնն է, որ նախանձը կը հալածէ:

Երրորդը Գիտութիւնն է, որ բարկութիւնը կը հալածէ:

Չորրորդը Զօրութիւնն է, որ ծուլութիւնը կը հալածէ:

Հինգերորդը Խրատն է, որ ագահութիւնը կը հալածէ:

Վեցերորդը Հանճարն է, որ որկրամոլութիւնը կը հալածէ:

Եօթներորդն Իմաստութիւնն է, որ բղջախոհութիւնը կը հալածէ:

Դարձեալ՝ կեանքը կրկնակի է. տեսական եւ գործնական:

Տեսականը միտքինն ու հոգիինն է, որ մարդը հրեշտակներուն կը նմանցնէ:

Երկրորդ՝ գործնականը, որ մարդս կատարեալ մարդ կ'ընէ:

Արդարեւ Տեսական կեանքին երեք պարգեւներ անհրաժեշտ են.

Նախ՝ Երկիւղը, որով պատկառանքով զԱստուած պիտի պաշտենք:

Երկրորդ՝ Հանճարը, որով ճշմարտութիւնը պիտի ճանչնանք:

Երրորդ՝ Իմաստութիւնը, որով բարութիւնը պիտի ճաշակենք:

Իսկ Գործնական կեանքը ունի Գթութիւնը՝ բարիք գործելու:

Արիութիւնն ու Զօրութիւնը՝ համբերելու:

Գիտութիւնը՝ գթութիւնը ուղղելու, առաջնորդելու:

Խրատը՝ զօրութիւնը ուղղելու, առաջնորդելու:

Հոգին Աստուա՛ծ է՝ ոսկիէ ձուլուած աշտանակ, եօթը պարգեւները ձէթով լեցուն եօթը ճրագներ են:

### Երկրորդ հարցում. առաջին պարգեւին մասին, որ է Իմաստութիւնը

Իմաստութիւնը Սուրբ Հոգիին պարգեւն է, որով զԱստուած կը ճանչնանք, որովհետեւ թէեւ հաւատքով ալ զԱստուած կը ճանչնանք, սակայն հաւատքը զԱստուած մեզի առանց քննութեան ցոյց կու տայ. իսկ իմաստութիւնը հաւատքին օգնական կ'ըլլայ ու կը խրատէ մարդուն՝ ըսելով, թէ՝ հաւատքին վկայութեան համակարծիք եղիր, քանի որ անոր ըսածը ճշմարիտ է: Քանի որ իմաստութեամբ զԱստուած կը ճանչնանք կրթութեան միջոցաւ, ինչը (կրթութիւնը) հաւատքը չունի, քանի որ հաւատքը առանց քննութեան կը սորվեցնէ հաւատալ հաւատալիքին ու թոյլ չի՛ տար պատճառը փնտռել: Դարձեալ՝ իմաստութեամբ Աստուծոյ քաղցրութիւնը կը ճաշակենք, կարծես թէ հաւատքը կ'ըսէ Աստուած քաղցր ու անոյշ է, իսկ իմաստութիւնը փորձառութեամբ ճաշակել կու տայ. որովհետեւ իմաստութեամբ հասուն կը դառնանք, որով մթին ու քօղարկուած բաները հաւատքով կը ճանչնանք: Այդ պատճառով վարդապետները կ'ըսեն, թէ իմաստութիւն է աստուածայիններու մասին մեր ունեցած բարեգոյն ծանօթութիւնը եւ իմացական ճանաչումը յաւիտենական կեանքին:

Իմաստութիւնը միտքի լոյսն է, որ հաւատքով կը փայլի. ով որ Հոգիին այս պարգեւը չունի, կոյր է, նոյնիսկ եթէ աչքեր ունի:

### Երրորդ հարցում. Սուրբ Հոգիին երկրորդ պարգեւին մասին, որ է Հանճարը

Հանճարը բնական եւ դրուած նշաններուն փրկական նշանակութիւնն իմանալու շնորհն է: Իմանալու շնորհ անոր համար կ'ըսէ, որովհետեւ այնքան ատեն որ մարդ աշխարհի վրայ է՝ տգիտութեան խաւարը ծածկած է մարդուն միտքը, իսկ հանճարի լոյսը՝ մարդուն միտքէն կը փարատէ այդ խաւարը: Իսկ խաւարը մեղքն է, որ կը մթագնէ մարդուն միտքը: Ինչպէս հրեաները իրենց երեսներուն վրայ վարագոյր ունէին ու չէին կրնար իմանալ հին օրէնքներու մարգարէութիւններուն ու օրինակներուն մէջ Քրիստոսի ծածկուած խորհուրդները, սակայն մենք, որ Քրիստոսին հաւատացինք, այդ ծածկուած բաները մեզի յայտնի դարձան, ու այդ վարագոյրը վերացաւ մեր միտքերէն, եւ զՔրիստոս ճանչնցանք ճշմարտապէս: Այսպէս ալ մեղքը վարագոյր մըն է, որ երբ ապաշխարութեամբ ոչնչանայ, այդ ատեն Հանճարին շնորհիւ մեր փրկութեան անհրաժեշտ բաները կը ճանչնանք:

Փրկական նշանակութիւն այն պատճառով կ'ըսէ, որովհետեւ Սուրբ Գիրքերուն մէջ ծածուկ բաներ ու գաղտնիքներ կան, որ կարելի չէ մեզի զանոնք առանց օրինակներու հասկնալ: Այդ պատճառով Աստուած մեզի Հանճարի պարգեւը տուաւ, որպէսզի անով իմանանք, թէ Սուրբ Գիրքին մէջ ինչքան փրկական օրինակներ ու գուշակութիւններ կան, որ մենք պէտք է իմանանք: Բնական եւ դրուած նշաններ այն պատճառով կ'ըսէ, քանի որ աշխարհի մէջ որեւէ մէկ բան չկայ, որ մեզի զԱստուած ցոյց չի տայ կամ չյորդորէ զԱստուած սիրել. ասիկա մեզի Հանճարը կ'ընէ: Այդ պատճառով Հանճարին կ'ըսուի, թէ բոլոր աներեւոյթ բաները մեզի երեւելի կ'ընէ, ու անհնար բաներուն մեզի ճար կու տայ:

Հանճարը լոյսը է, որով անյայտները կը յայտնուին, անհնար բաներուն՝ հնրաքներ կը գտնուին:

### Չորրորդ հարցում. Սուրբ Հոգիին երրորդ պարգեւին մասին, որ է Խորհուրդը

Խորհուրդը Սուրբ Հոգիին խրատն է, որ դժուար ու կարծր բաներուն մէջ թոյլ կու տայ մեզի ընտրութիւն կատարել, այսինքն՝ տեսական եւ գործնական առաքինութիւններուն միջեւ: Կամ՝ խորհուրդը ընտրութիւն կատարելն է դժուար գործերուն՝ գործելու բարեգոյն կերպը գտնելու՝ վախճանին համար: Արդ, գիտցի՛ր, թէ խորհուրդը խորհրդակցութիւն մըն է, որ դժուար գործերու համար կը կատարուի, ինչպէս են աւետարանական խրատները, որ աւելցուած են Աստուածաշունչին պատուիրաններուն:

Ինչպէս Քրիստոս կ'ըսէ, թէ ով որ մէկ երեսիդ զարնէ, անոր միւս երեսդ դարձուր, ով որ քեզ քաշելով մէկ մղոն տեղ տանի, դուն անոր հետ երկու մղոն գնայ, որպէսզի չարին հակառակ չերեւիս, այլ համբերութեամբ անոր անիրաւութեանը յաղթես: Եւ թէ՝ պէտք է ամէն ինչը ծախել ու աղքատներուն տալ, որ կատարելութեան խրատ է եւ ո՛չ թէ պատուիրանի խրատ:

Տակաւին այսպիսի բազմաթիւ բաներ կան, որ աւետարանական խրատ ու խորհուրդ կը կոչուին. այսպիսի խրատներու պարագային խելամտութեամբ պիտի վարուիս, որ ճար գտնես, որովհետեւ մարդ, երբեմն իր ոյժին ապաւինելով, առանց խորհրդակցութեան՝ բազմաթիւ դժուարութիւններու կը հանդիպի, սակայն մարդու ոյժը խորհրդակցութիւնը կը կառավարէ. այն բանը, որ ոյժով չեն կրնար ընել, խորհրդակցութիւնը մէկ ակնարկով ատոր ճարը կու տայ:

Սակայն եւ այնպէս՝ այս խորհուրդն ու խորհրդակցութիւնը, որ կ'ըսեմ, մարմնաւոր մի՛ իմանար, այլ հոգեւոր, թէ ինչպէս պիտի վարուիմ տեսական ու գործնական առաքինութեամբ եւ իմաստութեամբ: Այդ պատճառով Սուրբ Հոգին Եսայի մարգարէին բերանով նախ խորհուրդը ըսաւ եւ ետքէն՝ զօրութիւնը, իբրեւ թէ մարդուն զօրութիւնն ու ոյժը հոգեւոր առաքինութիւններով, իմաստութեամբ՝ խորհուրդով պիտի կառավարուին: Իսկ ան բաները, որ մեզ արքայութիւն կը հասցնեն, ատոնց մասին պէտք է լաւ մտածողութեամբ ու քաջութեամբ խորհուի:

Խորհուրդը խորհրդակցութիւն մըն է, որպէսզի մարդ անով կառավարուի, ով որ իր ոյժին կ'ապաւինի, բազմաթիւ դժուարութիւններու կը հանդիպի:

### Հինգերորդ հարցում. Սուրբ Հոգիին չորրորդ պարգեւին մասին, որ է Զօրութիւնը

Զօրութիւնն այն է, որով մարդ երկչոտութեան դէմ կ'արիանայ, եւ մարդ իր մէջ կը կրէ զայն՝ առաքինութիւն գործելու: Դարձեալ՝ զօրութիւնն այն է, որով մարդ քաջաբար կը կրէ չարչարանքները, իսկ հոգեւորապէս մոլութիւններուն դէմ կը պատերազմի: Քանի որ զօրութիւնը մարդս անյաղթելի կը դարձնէ, այդ պատճառով Ս. Պօղոս կ'ըսէր, թէ՝ ամէն ինչի կարող եմ Անոր միջոցով, Ով զօրացուց զիս: Դարձեալ՝ զօրութիւն է հաստատ միտքով բարձրութիւնը փառաւորել՝ գեղեցկապէս տնօրինելով դժուար բաները: Արդ, միտքին բարձրութիւնը փառաւորել այն պատճառով կ'ըսէ, քանի որ զօրութիւնը ո՛չ թէ միայն Աստուծոյ սիրոյն քաշած նեղութեան յաղթել կու տայ, այլեւ կը մոռցնէ: [Զօրութիւնն այն է], որ չի՛ կրնար բարկանալ եւ անշահ բաներ ցանկալ, եւ մարդուն հոգին այնպիսի ձեւով կը կապէ Աստուծոյ սիրոյն, որ բացի Աստուծմէ՝ ուրիշ ո՛չ մէկ բանի մտադրութիւն կ'ունենայ, այլ՝ իր ամբողջ միտքը, սէրն ու բարութիւնը դէպի Աստուած կ'ըլլան: Գեղեցկապէս տնօրինելով դժուար բաները՝ այն պատճառով կ'ըսէ, քանի որ զօրութիւնը մարդուն այնպէս համարձակ եւ ինքնավստահ կը դարձնէ, նոյնիսկ աստուածային զօրութեամբ ու ոյժով ամէն տեսակի դժուարութիւններուն յաղթել կու տայ:

Դուն զօրաւոր եւ արի եղի՛ր, Հոգիին շնորհիւ՝ մարդ բարի: Դժուար բաներէ մի՛ վախնար, այլ առիւծի կորիւն եղի՛ր:

### Վեցերորդ հարցում. Սուրբ Հոգիին հինգերորդ պարգեւին մասին, որ է Գիտութիւնը

Գիտութիւնը մարդկային գործերուն ճանաչումն է՝ յօգնութիւն փրկական հաւատքին: Քանի որ, ինչպէս իմաստութիւնն զԱստուած ճանչնալն է, այդպէս ալ գիտութիւնը՝ մարդկային գործերուն ճանաչումն է, այսինքն՝ խոհեմութեան, արիութեան, ողջախոհութեան եւ արդարութեան: Քանի որ որոշ անբաններ խոհեմ են, ինչպէս մրջիւնը, մեղուն եւ ուղտը, որոշներ՝ արի/քաջ, ինչպէս առիւծը, որոշներ՝ ողջախոհ, ինչպէս տատրակն ու փիղը, որոշներ ալ արդար, ինչպէս արագիլն ու սպիտակ արագիլը (լէյլէկ), որ իր ծերացած ծնողները կը կերակրէ. սակայն ասոնք ո՛չ թէ գիտութեամբ կը գործեն, այլ ի բնութենէ եւ ի բնազդէ, բայց մարդը՝ Աստուծոյ օգնութեամբ ու ուսմամբ, այդ պատճառով մարդուն գիտութիւնը Սուրբ Հոգիի պարգեւ կ'ըսուի: Յօգնութիւն փրկական հաւատքի այն պատճառով կ'ըսուի, քանի որ աստղերուն ու գազաններուն բնութեան, ինչպէս նաեւ բոյսերուն եւ այլ նմանօրինակ բաներու գիտութիւնը ճշմարիտ գիտութիւն չէ՛ ըստ Աստուծոյ օրէնքներուն, այլ ունայն եւ փուճ հետաքրքրութիւն է, որովհետեւ գիտութիւնն իրերուն տրուած բնազդին ճանաչումը չէ, այլ ճանաչումը, թէ մարդ ինչ պիտի գործէ եւ ինչ բանէ պիտի խորշի ու հեռու մնայ: Արդարեւ, մարդ այս պարգեւը պէտք է ունենայ բազմաթիւ պատճառներով.

Նախ՝ որ անհաւատներուն դէմ գիտութեամբ խօսի ու հակաճառէ:

Երկրորդ՝ որ անով չարէն խորշի ու բարութեամբ կառավարէ ժամանակաւոր բարութիւնները:

Երրորդ՝ անով պէտք է մեր գործերն ուղղել՝ բանականութեան կանոնով եւ ըստ Աստուծոյ օրինակին:

Չորրորդ՝ անով կարենանք գիտնալ չարը, որ բարիի կերպարանքով ձեւացած է. որպէս թէ գայլը գառնուկներուն նման:

Դուն միտքով յիմար մի՛ ըլլար, իսկ առ երեւոյթ՝ իմաստուն. այլ գիտուն եղիր խոնարհ հոգիով, արի, հեզ եւ արթուն:

### Եօթներորդ հարցում. Սուրբ Հոգիին վեցերորդ պարգեւին մասին, որ է Աստուածպաշտութիւնը

Աստուածպաշտութիւնը բարեպաշտ ջերմեռանդութիւն է աստուածային պաշտման: Կ'ուզեմ ըսել, թէ աստուածպաշտութիւնը կրօնքն մըն է, որ պէտք է ջերմ սիրով ըլլայ եւ ո՛չ թէ սառնասրտութեամբ, ատելութեամբ, որովհետեւ ուր որ ատելութիւն կայ, այնտեղ անկարգութիւն է:

Երեք բան անհրաժեշտ է աստուածպաշտութեան.

Առաջին՝ Աստուծոյ մեծութիւնը դաւանիլ:

Երկրորդ՝ պատկառիլ եւ խպնինք Սուրբ Գիրքէն. առանց կասկածի հաւատանք Սուրբ Գիրքի խօսքերուն եւ զգուշութեամբ պահենք. տակաւին, առանց խարդախութեան ու հաւատարմութեամբ ուրիշներուն սորվեցնենք. ո՛չ միտքը փոխենք, ո՛չ աւելցնենք ու ո՛չ ալ պակսեցնենք, ո՛չ թեթեւցնենք ու ո՛չ ալ ծանրացնենք:

Երրորդ՝ ընկերոջ պատիւ, որ մեծէն խպնինք ու ամչնանք. մեր նմանին հետ սիրով ու հաւասարութեամբ ապրինք, իսկ մեզմէ փոքրին օգնենք՝ խնամելով զայն:

Եթէ բարի աստուածապաշտ ես, Աստուած քեզի հետ հաշտ կ'ըլլայ:

### Ութերորդ հարցում. Սուրբ Հոգիին եօթներորդ պարգեւին մասին, որ է Երկիւղը

Երկիւղը չարէն փախուստն է, որպէսզի մարդ բարին, որ կը սիրէ, չկորսնցնէ:

Փախուստը երկու կերպով է. գովելի եւ նախատելի:

Նախատելի փախուստն այն է, որ մարդ կը վախնայ ժամանակաւոր բարիքները կորսնցնել:

Գովելի փախուստն այն է, որ մարդ կը վախնայ առաքինութիւնը եւ հոգեւոր բարիքները կորսնցնել:

Արդ, գիտցի՛ր, որ երկիւղը տեսակ-տեսակ է:

Նախ՝ երկիւղ կ'ըսուի բնական բնաւորութեան, որ ամէն մարդ վնասակար բաներէ կը վախնայ, ինչպէս կրակէն, հեղեղէն եւ այլն: Այս երկիւղը հոգիին համար ո՛չ վնաս կու տայ եւ ո՛չ ալ օգուտ: Այս երկիւղն Ադամին մեղանչումէն ետք մարդուն որպէս պատիժ տրուեցաւ:

Երկրորդ երկիւղն այն է, որ մարդ մարմինի վնասէն կը վախնայ. Քրիստոս ասոր դէմ ըսաւ, մի՛ վախնաք անոնցմէ որոնք մարմինը կը սպաննեն: Այս երկիւղը կրնայ բարի ըլլալ, երբ չարէն խոյս տալու ու փախչելու միտումով կ'ըլլայ. չար ալ կ'ըլլայ, երբ հոգեւոր բարութիւնը մարմինի սիրոյն կը մատնուի, ինչպէս ուրանալը:

Երրորդ երկիւղն աշխարհական է, որ մարդ կը վախնայ կորսնցնել ու կողոպտուիլ մարմնաւոր բարութիւններէն:

Չորրորդ երկիւղը ծառայական է, որով մարդ սկիզբը կը վախնայ բնականաբար գեհենէն, դժոխքէն:

Հինգերորդ՝ երկիւղն սկզբնական է, որով մարդ կը վախնայ գեհենէն եւ զԱստուած բարկացնելէն:

Վեցերորդ՝ երկիւղը որդիական է, որով մարդ կը վախնայ զԱստուած բարկացնելէ ու Անորմէ բաժնուելէ, ինչպէս որդին կը վախնայ իր հայրը նեղացնելէ, որպէսզի ժառանգութենէն ու հօր ունեցուածքէն չզրկուի:

Սուրբ Հոգիին պարգեւները եօթն են՝ եօթը մեղքերէն փրկող. դրախտը՝ ծաղկեալ դրախտ կ'ընեն ու բարիքներով զարդարուած:

1806

*Շարունակելի*

**Փոխադրութիւնը՝**
**Վարանդ (Յակոբ) ՔՈՐԹՄՈՍԵԱՆԻ**

*ՈԳԵՂԵՆ ՀԱՅՐԵՆԻՔ*

# *Մատյան մտածության*



Մովսես Խորենացու *«Հայոց պատմությունը»* հայ ժողովրդի համար մի նոր Ճանապարհի գիրք է, քանի որ ստեղծվել է *Աստվածաշունչ* մատյանի նմանությամբ ու կառուցվածքով և այդ դերն էլ ունի մեր ժողովրդի ազգային գիտակցության մեջ:

Հիշատակելով *Աստվածաշունչը* և պատմագրական աղբյուրները՝ Խորենացին խորանում է մինչև ջրհեղեղ: Ջրհեղեղի փաստը՝ որպես թե՛ իրողություն, թե՛ առասպել, ժամանակային տարբեր նշանագրումներ ու թվագրումներ ունի, որ տատանվում է Ք. ծ. ա. 5-րդ հազարամյակի կեսից մինչև 3-րդ հազարամյակ: Պատմագիրը ներկայացնում է Նոյի ծննդաբանությունն ու տոհմաբանությունը, այնուհետև խոսքը շարունակում Նոյի Սեմ, Քամ և Հաբեթ որդիների ճյուղավորումով: Նրանցից Հաբեթը դառնում է հայ ժողովրդի նախահայրը, որից հաջորդաբար սերվում են Գամերը (Նոյի հոր անունը Ղամեք էր, բացառված չէ, որ Գամեր անունը Ղամեքի տարընթերցում լինի), Թիրասը, Թորգոմը, Հայկը, Արամանյակը, Արամայիսը, Ամասիան, Գեղամը, Հարման, Արամը և Արա Գեղեցիկը: Այս ազգաբանությունը Խորենացին համարում է հավաստի. «Եվ սա ճշմարիտ է, ոչ ոք չկասկածի»:

Պարսից Արշակունի Արշակ Մեծ արքան Հայաստանի գահակալ է նշանակում եղբորը՝ Վաղարշակին, որն ուշիմ ասորի Մար Աբաս Կատինայի միջոցով իր մեծ եղբորից ցանկանում է իմանալ, թե ինքը ինչ երկրի թագավոր է, իրենից առաջ քաջե՞ր են եղել, թե՞ ապիկարներ: Արքունական դիվանը Նինվեում էր, որտեղից հույն և ասորի գրերով Մար Աբաս Կատինան բերում է միայն Հայաստանին վերաբերող պատմությունը. «Աստվածներից առաջինները ահեղ էին և երևելի և աշխարհի մեծամեծ բարիքների պատճառ, աշխարհի և բազմամարդության սկիզբ» (I, Թ): Սրանցից առաջանում է հսկաների սերունդը, որը հղանում է աշտարակաշինության գաղափարը: Աստծու ցասումից հողմը կործանում է աշտարակը և այնտեղ եղածներից յուրաքանչյուրին տալիս մյուսին անհասկանալի լեզու, որով նրանց մեջ շփոթություն (խառնակություն) է ընկնում: Աշտարակաշինությունն ազգերի միաբանության անհրաժեշտ (երազային) գաղափարի խորհուրդն է, որը փլուզվում է, որովհետև հնարավոր չէր: «Մեկ լեզվով, մեկ բարբառով խոսող մեկ ժողովուրդը» չի դիմանում առաջին ստուգողական փորձությանը, տարբեր լեզուներով տրոհվում, դառնում է 72 ժողովուրդ և ցրվում արևելքի ու արևմուտքի երկրներում:

Աշտարակաշինությանը մասնակցում էր նաև Հապետոսյան (Հաբեթյան) Հայկը՝ «անվանի և քաջ նախարարը, հաստ աղեղով և հզոր նետաձիգ» (I, Թ): Մի քանի տող անց պատմահայրն ավելի խորացնում և գեղեցկացնում է Հայկի կերպարը. «Այս Հայկը, ասում է, վայելչակազմ էր, թիկնավետ, խիստ գանգուր մազերով, վառվռուն աչքերով, հաստ բազուկներով: Սա քաջ և երևելի հանդիսացավ հսկաների մեջ, դիմադրող այն բոլորին, որոնք ձեռք էին բարձրացնում բոլոր հսկաների և դյուցազունների վրա տիրապետելու» (I, Ժ):

Հայկը և Բելը (Նեբրովթ) Նոյի թոռան թոռներն էին՝ Քամի և Հաբեթի սերունդները: Հայկը «խրոխտանալով ձեռք բարձրացրեց Բելի բռնավորության դեմ, որին պատահմամբ հաջողվեց բռնանալ և բոլոր երկիրը գրավել» (I, Ժ): Հայկը չի կամենում Բելին հնազանդվել և «Բաբելոնում Արամանյակ որդին ծնելուց հետո չվեց դեպի Արարադի երկիրը, որ գտնվում էր հյուսիսային կողմերում, իր որդիներով, դուստրերով և որդիների որդիներով, որ զորավոր մարդիկ էին, թվով մոտ երեք հարյուր հոգի» (I, Ժ): Հայկի հետ էին «ուրիշ ընդոծիններ և նրանց հարած եկվորներ»: Եթե սրանք էլ լինեին երկու հարյուր հոգի, ուրեմն հինգ հարյուր մարդով Հայկը հիմնում է հայոց հայրենիքը:

Նա նախ՝ բնակություն է հաստատում «մի լեռան ստորոտում դաշտավայր տեղում, որտեղ ապրում էին սակավաթիվ մարդիկ» ավելի վաղ, նախապես, առաջին ցրվածներից: Այստեղ հնազանդեցնում է նրանց, ժառանգություն թողնում թոռանը՝ Արամանյակի որդի Կադմոսին, իսկ ինքը մնացած մարդկանցով շարժվում դեպի հյուսիս-արևմուտք, հաստատվում «մի բարձրավանդակ դաշտում և լեռնադաշտի անունը կոչում է Հարք», որ նշանակում է «այստեղ բնակվողները հայեր են Թորգոմի տան սերունդի», շինում է և մի գյուղ՝ Հայկաշեն, և իրեն ենթարկում այստեղ բնակվող սակավաթիվ մարդկանց (I, Ժ):

Բաբելոնից Տիտանյան Բելը Հայկին հնազանդության է կոչում. «Դու ցուրտ սառնամանիքների մեջ բնակվեցիր, ասում է, սակայն տաքացրու՛ և մեղմացրու՛ քո հպարտ բնավորության ցուրտ սառնությունը և ինձ հնազանդելով խաղաղ ապրիր՝ որտեղ որ կհաճես իմ երկրում բնակության տեղ ընտրել» (I, ԺԱ): Հայկը մերժում է: Բելը «հավերժական քաջերով և երկնադեզ հսկաներով» հարձակվում, նախ՝ փախցնում է Կադմոսին, ապա՝ շարժվում Հայկի վրա: Վերջինս իր քաջերով դուրս է գալիս Վանա լճի ափ և ասում՝ կամ հաղթենք ու ազատ ապրենք, «կամ մեռնենք և մեր աղխը Բելի ծառայության տակ ընկնի» (I, ԺԱ): Հիշենք, որ Եղիշեի գրքում հայոց բանակին գրեթե այսպես էր դիմում Վարդանը:

Հայկը եռանկյուն ձևով դասավորում է իր մարդկանց, և ինքն առջևից հարձակվում սպառազեն Բելի վրա: Սկզբում «երկու կողմերն էլ անպարտելի» են մնում (ըստ Եղիշեի՝ երկու կողմերն էլ պարտվեցին): Բելի համար այս վիճակն անսովոր էր և հետ է քաշվում: Դա տեսնում է Հայկը, առաջ է նետվում և լայնալիճ աղեղից արձակած եռաթև նետով այնքան ուժգին է խոցում նրա կուրծքը, որ «սլաքը շեշտակի թափ անցնելով նրա թիկունքի միջով, գետին է խրվում»: Տապալված Բելին տեսնելով՝ նրա զորքը փախուստի է դիմում:

Հայկը ճակատամարտի տեղը դարձնում է դաստակերտ, անվանում Հայք, իսկ գավառն էլ կոչում է Հայոց ձոր: Բելի ընկած տեղը կոչում է Գերեզմանք: Ահա մեր նախնի Հայկի անունով էլ մեր երկիրը կոչվում է Հայք:

Ո՞վ էր Բելը, և ինչպե՞ս է վկայված նրա կերպարը:

Ջրհեղեղից հետո Քամի սերունդներն ապրեցին արևելքում՝ «Սենաար երկրում», որտեղ «մի դաշտ գտան և այնտեղ բնակվեցին» (Ծննդ. ԺԲ 2): Դաշտը լի էր վայրի գազաններով, ժողովրդին պետք էր պաշտպանել նրանցից: Եվ ահա այդ ժամանակ հայտնվում է Նեբրովթը: Նրա հայրը Քուշն էր, կինը՝ Շամիրամը (Սեմիրամ), որդին՝ Թամուզը: Նա հայտնի է դառնում որպես վայրի գազանների որսորդ, որպես զորավոր մի ուժ: Նա մարդկանց հավաքում է քաղաքների մեջ, քաղաքները շրջափակում պարիսպներով և վերածում թագավորության: Նրա թագավորության սկիզբը Բաբելոնն էր ու Աքքադը: Բելը ոչ միայն իր երկրի թագավորն էր, այլև կրոնական առաջնորդը:

Նեբրովթ անունն առաջացել է marad բառից, որ նշանակում է «նա ապստամբեց»: Սա նշանակում է, որ նա «ժողովրդին ապստամբ դարձրեց Աստծու դեմ»: Պատմիչ Հովսեփոսը գրում է, որ նա մարդկանց դրդում էր «արհամարհելու Աստծուն»: Այս ընթացքում նրա կերպարը վերածվում է բռնակալի: Հաջորդում է աշտարակաշինությունը...

Առասպելաբանությունը նրա մասին նաև այլ բաներ է ասում: Օրինակ՝ երբ նա մահանում է (և ոչ թե սպանվում), նրա մարմինը մասնատում են, այրում և մոխիրը բաժանում երկրի տարբեր մասերում:

Բելը չար ուժի համաշխարհային մարմնացում էր, և Հայկին էր վիճակված նրան ոչնչացնելու առաքելությունը: Հայկի հաղթանակը ոչ միայն ինքնորոշման խորհուրդ ուներ, այլև չար ուժի պատժման, ինչը հակադարձ տրամաբանությամբ նշանակում է, որ Հայկը բարի ուժի մարմնացումն էր:

Ահա այսպես, Մար Աբաս Կատինայից քաղելով, պատմիչը շարադրում է մեր ժողովրդի ծագումնաբանության սկիզբը:

Մովսես Խորենացին մեծ հայրենասեր է. «Ահա այժմ ես զվարճանում եմ՝ ոչ փոքր ուրախություն զգալով, որ հասնում եմ այն տեղը, երբ մեր բնիկ նախնիի սերունդները թագավորության աստիճանի են հասնում» (I, ԻԱ): Նրա համար ընդունելի ու սիրելի են մեր այն արքաները, որոնք բնիկներ են, «արյունակիցներ և իսկական հարազատներ», որոնց մասին դեռևս Երեմիա մարգարեն է հիշատակել՝ որպես «Այրարատյան թագավորություն և Ասքանազյան գունդ» (I, ԻԲ):

Խորենացին որքան էլ պահում է հայոց արքաների հաջորդական կարգը, բայց նրա համար սիրելի են հատկապես երեքը. «Ես սիրում եմ ըստ քաջության այսպես կոչել՝ Հայկ, Արամ, Տիգրան. որովհետև քաջերի սերունդները քաջեր են, իսկ նրանց միջև եղածներին ով ինչպես ուզում է, թող կոչի»:

Խորենացին Տիգրան Բ Մեծին միավորել է Տիգրան Ա Երվանդյանի հետ: Նրա հիացմունքը Տիգրանի հանդեպ անսահման է. «հուժկու, անվանի և հաղթող այլ աշխարհակալների շարքում»: Տիգրանը, մեր բնակության սահմաններն ընդարձակելով, «....հասցրեց մինչև հին բնակության սահմանների ծայրերը: ....Մեր ազգը բարձրացրեց, և մեզ, որ [օտարների] լծի տակ էինք, դարձրեց շատերին լուծ դնողներ և հարկապահանջներ»:

Արտաշեսի հանդեպ Խորենացին շատ դրական է տրամադրված և նրա գնահատանքի ամենահիմնական տողերը, հաջող պատերազմական գործողություններից հետո, սրանք են. «Բայց ասում են, թե Արտաշեսի ժամանակ մեր Հայոց աշխարհում անմշակ հող չմնաց, ո՛չ լեռնային և ո՛չ դաշտային, այնքան շենացել էր երկիրը»: Արտաշեսի ժամանակ զարգանում են նաև արվեստն ու գիտությունը. սահմանվում է տոմար, ծովակներն ու գետերը դառնում են նավարկելի, զարգանում են երկրագործությունն ու ձկնորսությունը:

Խոսելով Տրդատ Մեծի մասին և ցույց տալով նրա հզոր ուժը՝ պատմահայրը գրում է. «Երկու վայրենի ցուլերի եղջյուրը մի ձեռքով բռնելով՝ պոկեց և, վիզը ոլորելով, ջախջախեց»: Այնուհետև՝ ընկած վիճակում նա կարողանում է կանգնեցնել կառքը, «որի վրա բոլորը զարմացան»: Խորենացին սուրբ է համարում Տրդատին, որը տեսնելով, որ ժողովուրդը դիմադրում է իրեն «քրիստոնյա կրոնի վերաբերմամբ», թողնում է թագավորությունը և գնում Գրիգոր Լուսավորիչի հետևից Մանյա այրք: Նրան հետ են կանչում թագավորությունը շարունակելու, բայց չի համաձայնում, և նրան թունավորում են:

Երկրորդ գրքի այս վերջին գլուխն իր ներքին վրդովմունքով շատ նման է երրորդ գրքի վերջին գլխին՝ «Ողբ»-ին: Տրդատ թագավորի պատմությունն անելիս Խորենացին գրում է. «Այստեղ ես ամաչում եմ ասել ճշմարտությունը...»: Նա հայ ժողովրդին մեղադրում է «անօրենության ու ամբարիշտության» մեջ, համարում «խստասիրտ», բարքով «ուսումնատյաց», նաև՝ չարախոս և տգետ: «Ով չար և ստահակ ազգ, ազգ՝ որ իր սիրտը չուղղեց, և որի հոգին Աստծուն հավատարիմ չմնաց»,— շարունակում է նա: Երևում է, որ Խորենացին խորապես վիրավորված է, քանզի ասում է՝ եթե այդպես վարվեցին թագավորի հանդեպ. «այլևս մենք ի՞նչ կարող ենք ասել Աստծուն՝ ձեր կողմից մեզ հասած նեղությունների համար, մեզ՝ որ սովոր ենք նեղությունների և աղքատության»:

*«Հայոց պատմության»* երրորդ գրքում քերթողահայրը պատմում է այն ամենը, «ինչ որ մեր ժամանակները կամ քիչ առաջ պատահել է»: Պատմության այս մասը ծանոթ է Փավստոս Բուզանդից:

Տրդատ Մեծին հաջորդող Խոսրով Կոտակը՝ «անփույթ լինելով քաջությամբ .... զբաղված էր զբոսանքներով», որի համար էլ Ազատ գետի ափին հիմնում է անտառ: Նրա հաջորդի՝ Տիրանի կարգադրությամբ նահատակվում են Հուսիկ վեհափառն ու Դանիել քահանան: Հուսիկի որդիները «գովելի վարք չունեցան», և «երկուսը միասին կայծակնահար եղան»: Իսկ Շապուհը Տիրանին կանչում և կուրացնում է, որովհետև պարսիկների ու հույների արանքում տատանվել էր: Սկսվում է Արշակ Երկրորդի գահակալությունը. Հռոմն իր հերթին է «լիովին հնազանդություն» պահանջում, Պարսկաստանը՝ իր, և երկփեղկվում է Արշակի ուժը, ինչն էլ նրան ու հայոց երկիրը հասցնում է կործանման:

Խորենացին խորին հարգանքով է շարադրում հոգևոր հայրերի պատմությունը: Մեծ պատկառանքով է նա պատմում Ներսես Մեծի հովվապետության մասին, որ մեծապես բարձրացրեց Եկեղեցու դերը պետության մեջ և միջպետական հարաբերություններում՝ հատկապես Հռոմի հետ: Հռոմից, ինքնակալի ցեղից, Արշակին նա մի կին է բերում՝ Ոլիմպիադա անունով: Հերթական խաղաղարար առաքելության ժամանակ Վաղեսը Ներսեսին աքսորում է:

Արշակավանի կառուցումը Խորենացին համարում է «անմիտ» գործ՝ «մեղավոր մարդկանց ժողովատեղի», որը շարժում է հայ նախարարների զայրույթը և նրանց իսկ ձեռքով կործանվում: Շապուհը դրսից էր Հայաստանը քանդում (Դարանաղյաց Անին, Տիգրանակերտը), հայ նախարարների ու Արշակի ընդհարումը՝ ներսից: Անմիաբանություն, երկպառակություն:

Արքաների միջև փոխանակվող նամակներում Հռոմի ինքնակալը հայոց Տիրան արքային դիմում է «մեր գործակալ» ձևով, իսկ Արշակը հակառակ հասցեով ուղղված նամակի մեջ նրան պատվում «մեր տեր» արտահայտությամբ: Նույնը պարսիկների կապակցությամբ, ինչը վերստին ի ցույց է դնում Հայաստանի ենթակա, կախյալ և անինքնուրույն վիճակը: Եվ դեռ այս պայմաններում անմիաբան նախարարների ջարդ՝ ի վրեժ Արշակավանի կործանման:

Հետո Արշակը հայտնվում է Շապուհի գերության մեջ, իսկ Հայաստանի վրա են հարձակվում դավաճան նախարարներ Մերուժան Արծրունին և Վահան Մամիկոնյանը: Այս դժնդակ կացության մեջ Հայաստանին թագավորում է Պապը: Հայ նախարարները պարսկական հպատակության համար էին ասպատակում հայրենի երկիրը, իսկ Պապին, աքսորից ազատված Ներսեսի հետ, Հռոմից ուղարկեցին, որ Հայաստանը ենթարկեցնի իրենց: Ձիրավի ճակատամարտում պարսկամետ ուժերը պարտվում են, իսկ Մերուժանը՝ «սատակում»: Ներսես վեհափառին Պապը թունավորում է՝ պետական գործերին չափից ավելի եռանդուն մասնակցություն ունենալու պատճառով, իսկ իրականում արքան թուլացնում է Եկեղեցու չափազանց իրավունքները: Վեհափառ է դառնում Սահակը, իսկ Պապն իր հերթին կալանվում է Տերենտիոսի կողմից և Թեոդոս ինքնակալի առաջ գլխատվում:

Արքաները հաջորդում են իրար (Վարազդատ, Արշակ, Վաղարշակ), իսկ թուլացած երկիրը բաժանվում է երկու ախոյանների միջև և հպատակվում Պարսկաստանին ու Հռոմին: Վերանում է հին աշխարհի երբեմնի հզոր տերություններից մեկը: Իսկ ինչ որ մնաց, արդեն ամոթանք էր նախնիների ստեղծած փառքին, թեև դա էլ կարող էր չլինել:

Ձենքի չկայացած հաղթանակին գալիս է փոխարինելու գիրը: Խորենացին, օգտվելով Կորյունից, ներկայացնում է Մաշտոցի կենսագրությունը, դանիելյան գրերի պատմությունը, մեսրոպյան այբուբենի ստեղծումը, թարգմանական և կրթական գործը: ➥ էջ 8

# Հիշողության համանվագայնությունը և բազմաձայնությունը Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն», «Եռաձայն պատարագ» պոեմներում

Ժամանակին, նկատի առնելով Կոմիտասի կերպարի ստեղծագործական ներքին առանձնահատկություններն «Անլռելի զանգակատուն» պոեմում, Գ. Մահարին գրում էր. «Բանաստեղծը կտրել է Կոմիտասը Կոմիտասից և այն դարձրել խորհուրդ ու խորհրդանշան, մնալով սակայն միշտ Կոմիտասի հետ»: Լրացնելով Մահարուն՝ գեղարվեստական նույն արժանիքն է ընդգծում Դ. Գասպարյանը. «Կոմիտասի կերպարը Սևակի ահագնացող հոգևոր պոռթկման ոչ միայն նպատակ է, այլև միջոց՝ մեկնելու, ինչպես ինքն է ասում, հայոց չհասկացված բախտի քմայքը»:

Մտահղանալով «Անլռելի զանգակատուն» պոեմը՝ 1915 թ. մեծ նահատակի՝ Կոմիտասի ողբերգական կերպարով Սևակը բարձրաձայնում էր ցեղասպանության և բռնագրավված հայրենիքի պահանջատիրությունը: «Անլռելի զանգակատուն» ձայնապատկերը ոչ միայն հայ երգի հանճարի հարատևության, այլև ցեղասպանության ազգային հիշողության և արդար պահանջատիրության եռաձայնն է՝ Կոմիտաս — ցեղասպանություն — բռնազավթված հայրենիք եռամիասնությամբ. «Իմ ողջ կյանքում ես մտքիս մեջ գրել եմ «Զանգակատունը»: Գրել եմ զանազան ձևերով՝ իբրև վեպ, իբրև վիպակ, իբրև ուսումնասիրություն, իբրև հոդվածների շարք, իբրև ողբերգություն կամ դրամա»:

Գրապատմական նշանակության առումով կարևոր է պոեմի ստեղծման ժամանակաշրջանը՝ 1957—1958 թթ.: Սևակը վերասկզբնավորում և վերաընթացքավորում էր գաղափարագեղարվեստական այն ծրագիրը, որ ծնունդ էր առել 1920-ական թթ. գրաքաղաքական պայմաններում և ողբերգաբար ընդհատվել 1937-ով: Գեղարվեստի մտքի պատմության մեջ Սևակն առաջինն էր, որ «ազգասպանություն» եզրույթով իրավաքաղաքական բնորոշում տվեց 1915-ի ցեղասպանությանը. «Առաջին դեպքը ոչ կոտորածի, // առաջին դեպքը... ազգասպանությա՛ն»:

Կոմիտասի հոգևոր կերպարն ուղեկցել է Սևակին ամբողջ կյանքում. ինքնակենսագրականում բանաստեղծը նշում է, որ ամբողջ կյանքում տառապել է կոմիտասասիրությունից: Մոսկվայում նյարդայնության ախտորոշումով հիվանդանոցում պառկած՝ բանաստեղծը խնդրել է բերել Կոմիտասի դիմանկարը. ժամերով նայում էր Կոմիտասի դիմապատկերին: Սևակի վերաիմաստավորմամբ՝ Կոմիտասի գործը համահավասար է Մաշտոցի գործին: Այս վերարժևորումը նաև 4-րդ և 20-րդ դարերի պատմական իրադրությունների ներքին զուգահեռի վրա գրի և երգի ոգեղեն ուժի գերագնահատումն է ազգային գոյության ճակատագրական պահին:

Համազանգերով ու ողողանջներով ծավալվող «Անլռելի զանգակատուն» պոեմը կառուցված է ազգային երգարվեստի առանձնահատուկ նրբերանգներով, եղանակավորված երաժշտական կշռույթով, բառի ու հանգի համաչափությամբ: Բանաստեղծի խոսքն ու Կոմիտասի երգը համալրում են իրար. «Կառուցվածքը՝ ըստ Կոմիտասյան երգերի, այսինքն՝ շարադրել Կոմիտասի ողջ կյանքը ըստ նրա համապատասխան երգերի, եթե որբ է՝ «Անտունի», եթե պանդուխտ է՝ «Կռունկ», եթե սիրո մասին է՝ «Սոնա յար»: Գործը մտահղացված էր իբրև համավագ՝ սիմֆոնիա, կամ իր եկեղեցական կարգը նկատի ունենալով՝ իբրև օրատորիա»:

Սևակը ձգտում էր գեղարվեստական այնպիսի ձևի, որ անհատական կերպարով ամբողջացներ ժողովրդի գոյաբանության համապատկերը, ցեղասպանության և բռնազավթված հայրենիքի ողբերգությունը: Գեղարվեստական ձևի ներքին որոնումների ոգեղեն ճանապարհին տոհմիկ հայ երգը՝ իր գողթան, վիպական, հոգևոր ու ժողովրդական առանձնահատկություններով, դառնում է արտահայտման գեղագիտական կերպ, Կոմիտասի ճակատագիրը՝ գեղագիտական միջոց: Կոմիտասի կերպարի ոգեղենացումով Սևակը հանճարի կյանքն ու ճակատագիրը համաձուլում է ժողովրդի պատմությանն ու ճակատագրին. «Գրել Կոմիտասի մասին,— առանձնանշում է Պ. Սևակը,— հավասարազոր էր գրել հայ ժողովրդի վերջին հարյուր տարվա պատմությունը՝ ժողովրդի կյանքով ու երազանքներով, կենցաղով ու գոյամարտով, երգով ու լացով, եվրոպական դիվանագիտությամբ ու թուրքական բարբարոսությամբ, ազգագրությամբ ու ազգագիտությամբ, անցյալով ու ապագայով»:

Պոեմի առանցքային խնդիրներից է ազգային կյանքում Կոմիտասի պատմական առաքելության բացահայտումը: Նախ և առաջ Կոմիտասը մաքրագործում, վերածնում, կատարելագործում է ժողովրդի պես ձուլման, աղավաղման ենթարկվող տոհմիկ հայ երգը. «Ոչ միայն ժողովուրդն է նրանց ծնում,— գտնում է Սևակը,— այլև նրանք են ժողովուրդ վերածնում»: Ազգային երգի ինքնության վերածնությամբ Կոմիտասը բռնաձուլման և համընդհանրացման դեմ դնում է ազգային դիմանկարի պահպանման զորությունն ու ուժը: Միաժամանակ Կոմիտասը հավաքագրում, եղանակավորում, կորստից փրկում է բնաշխարհիկ հայ երգի նշխարները՝ ազգային երգարվեստում պատմական նույն դերն ու նշանակությունն ունենալով, ինչ Խորենացին՝ առասպելաբանության մեջ: Պոլսում Կոմիտասն ստեղծում է երեքհարյուրհոգանոց «Գուսան» երգչախումբը՝ հավաքագրելով հայոց գավառների շնորհալի ձայները, հանդես է գալիս դասախոսություններով, հղանում «Վարդան» և «Անուշ» օպերաները՝ իր գործունեությամբ անգնահատելի ավանդ թողնելով հայ երգարվեստի զարգացման ու տարածման գործում:

Կոմիտասի դիմապատկերը քանդակելիս Սևակն ընդգծում է «Վարդան» օպերայի հղացման գաղափարը՝ որպես Կոմիտասի ներհայեցողության մի եզր՝ մատնանշելով հայաշխարհիկ երգի ոգեղեն ազդեցությունն ազգային դիմադրողականության բարձրացման գործում: Կոմիտասի երգը դարձավ ազգապահպան մի նոր զենք կամ դիմադրության մի նոր զորություն, ինչն էլ բանաստեղծին իրավունք է վերապահել Կոմիտասի մեծությունը բաղդատելու Մաշտոցի մեծության հետ. «Դու՝ մեր երգի Մեսրոպ Մաշտոց, // Գիրն ու տառն ես Հայոց երգի...»: Միաժամանակ հանձին Կոմիտասի՝ հայ երգը՝ որպես ազգային ոգեղեն արժեք, արժանապատիվ ներկայությամբ նվաճում է միջազգային ճանաչում՝ Եվրոպայի հոգևոր ուշադրությունը բևեռելով Հայաստանի վրա: Զեկուցումների, դասախոսությունների, համերգների համար Կոմիտասը հրավիրվում է Փարիզ, Բեռլին, Վիեննա, Ժնև, Լոզան. «Ու Եվրոպան, որ գիտեր միայն ինչ-որ Արևելք՝ // ....Հիմա արդեն Եվրոպան // Գտավ մի նոր ժողովուրդ.... // Եվ երկիրն այդ նորագյուտ // Նոր անունով մկրտեց՝ // Արևելքի Իտալիա...»:

Պոեմի հիմնական գաղափարը խտացված է «Եղեռնի համազանգ»-ում, որի ողողանջները ազգային ողբերգության ժողովրդական ողբերգեր են: Պոեմի այս մասում միակ և եզակի անգամ մահվան ու աքսորի անապատներով ձգվող ժողովրդի ուժահատ, լլկված շարքերում տարածվում է Կոմիտասի աստվածեղեն ձայնը. «Յաղագըս հարց, եղբարց մերոց, // Որք են տարեալ ի գերութիւն, // —Տէր, ողորմեա...», որին հետևում է բանաստեղծի արձագանքը. «Իսկ Հայրերը արդեն չկա՛ն, // Եղբայրներին թուր ու ձգան // Վերջ են տվել սար ու ձորում...»: Պատկերի ու մտապատկերի իրական կապի մասին է, որ Սևակը գրում է. «Եվ պատկերներից այս ահազարհուր, բայց և իրական, // Նախ ցնորվեցին աչքե՛րը նրա // Եվ ապա մի՛տքը, մի՛տքը տիրական...»: Աքսորի ողողանջի վերջին հնչյունները Կոմիտասի հոգևոր ցավի ահավոր ողբերգությունն են. «Ուր ո՞չ մահ կար, // Ո՞չ կյանքի շողք»: «Ցնորման» ողողանջում խոսքը դարձյալ շարունակվում է ժողովրդական ողբի հանգերգով և մարում «Անանց սուգի» ողողանջով. «Նա չհասցըրեց իր օպերայում // Թշվառ Անուշին խելացընորել, // Եվ ի՞նքը, ի՞նքը ցնորվեց...»:



«Զանգակատունը» ողողանջում է հոգևոր եղանակի մի այնպիսի կարգով, որ մարող հնչյունները վերածնվում են ահագնացող արձագանքներով, իսկ «Ահագնացող արձագանք»-ի ողողանջները ազգային վերածնության ու նոր սկզբի զանգահարությունն են: Ազգային վերազարթոնքի սկիզբը համահավաքն է, որ գաղափարանշվում է Կոմիտասի վերադարձով և Մասիսների հսկումի տակ հարության խորհրդով. «Ու վերադարձավ, // Որ էլ չգնա՛, // Որ մրսած հոգին նորից տաքանա // Ժողովրդական սիրո տաք օդով... // Հայացքի մուժը այնտեղ չքանա, // Աչքերը փայլեն իրենց հին ցոլքով // Ու նորից ցրեն // Ու փռեն չորս կողմ // Մարդեղացումը աստվածայնության...»:

«Զանգակատան» ողողանջի ձայնապատկերը շարունակվում է «Եռաձայն պատարագ» պոեմում: Եթե մի դեպքում զանգակատունն է ողողանջում ցեղասպանության և կորուսյալ հայրենիքի ձայնը, մյուս դեպքում Սիսն ու Մասիսն են եռաձայնում. «Ողբամ մեռելոց, բեկանեմ շանթեր, կոչեմ ապրողաց»: Բնույթով պոեմը պատարագ-ռեքվիեմ է. Սևակն այն գրել է ցեղասպանության 50-րդ տարելիցին՝ 1965-ին: Պատարագի պատկերի գաղափարը, ըստ երևույթին, կապված է ապրիլի 24-ի համազգային սգո երթի հետ, որ սկիզբ է առել հենց պոեմի գրման տարեթվից: Պատարագի հոգևոր արարողության երաժշտական ներքին եղանակով հնչում են բանաստեղծի եռաձայնի ողողանջները:

Ցեղասպանության ողբերգության և ազգային ինքնապաշտպան դիմադրությունների խոհ-ապրումները լրացնում են իրար ինչպես «Անլռելի զանգակատան» մեջ, այնպես էլ «Եռաձայն պատարագ»-ում: Կոտորածների ողբերգին կամ ողբերգական խոհին նման դեպքերում հաջորդում է փառերգությունը կամ ներքին ակնածանքի ինքնարտահայտումը.

*Կար եռամատնյա մի խաչակնքում*
*և եռամասնյա մի մեծ նպատակ...*
*Թրի-սրի դեմ,*
*հրի դեմ, ջրի,*
*հրանոթի դեմ ու գնդացրի,*
*երեկվա նման ու վաղվա նման*
*մարտնչում էին ակռա-ատամով...*
*Վանում, Ուրֆայում, Մուսայի վրա,*
*Գարահիսարի կիսավեր բերդում...*

Պոեմում առանձնադիտելի է «երեք»-ի գաղափարանշումը՝ «եռաձայն», «եռամատնյա», «եռամասնյա», որոնց մեջ անդրադարձվում է աստվածաշնչյան Սուրբ Երրորդության խորհուրդը: Հավատարմության խոստովանությունն ինքն իր առջև, որ սոսկ անհատական հավատարմություն չէ, այլև համազգային ու համաժողովրդական, խոհափիլիսոփայական այսպիսի դրսևորում է ձեռք բերում.

*Մեր... հայրենի՛քը մեզնից դատարկվեց:*
*Բայց... ո՞չ մի վայրկյան, ո՞չ մի ակնթարթ,*
*մենք չե՛նք դատարկվել մեր հայրենիքից:*
*Մե՛նք սպանվեցինք մեր հայրենիքում,*
*բայց հայրենիքը մեր մեջ չսպանվե՛ց...*

Պատմական հայրենիքից ժողովրդի բռնագաղթին զուգահեռ՝ բանաստեղծն աղաղակում է հոգու աքսորի մասին, կենդանի մարմինը լքած հայ հոգու մասին, որ ինքնորոնումի հետքերով ձգտել է կորուսյալ հայրենիք և գամվել նրան. «Ամենազորեղ բանը աշխարհում հիշողությունն է»,— հռչակում է բանաստեղծը՝ ճակատամարտ տալով պատմական անարդարության դեմ: Սևակի անհաշտությունը վերաճում է ազգային ընթացք գաղափարանշող սկզբունքի.

*Հայրենիքն այն է, որ գտնված է*
*ի սկզբանե, ի ծնե և միշտ,*
*ուրեմն նաև նա չի էլ կորչում...*
*Հայրենիքն այն է, որ ոչ թե կորչում,*
*այլ ընդամենը հափշտակվում է,*
*ինչպես որ ձեռքի ափը չի կորչում,*
*երբ նա փակվում է,*
*բայց և չի կարող միշտ մնալ փակված,*
*ինչպես հայրենիքն՝ միշտ հափշտակված...*

Ժողովրդի պատմության վկայի բարձունքից բանաստեղծի պատգամը նախ՝ ազգահավաքն է, ապա՝ հայրենահավաքը. «Դու այսուհետև ժողովվես պիտի // նախ՝ ինքդ քո մեջ, // և ապա՝ քո շուրջ»:

Սևակի հայրենասիրական պոեզիան իր ներքին առանձնահատկություններով և գաղափարաբանական արժեկշռով գնահատելի ավանդ է ազգային բանարվեստի և առհասարակ ժողովրդի գոյաբանության վերելքի պատմության մեջ:

**Խմբագրական**

# Մատյան մտածության

↩ էջ 6

Պարսկական Հայաստանում թույլատրվում էր ասորական գիրը, և արգելվում՝ հունականը: Հռոմեական հատվածում կրթությունը տարվում էր միայն հունարեն: Գրերի գյուտից հետո պարսկական մասում թափ է առնում կրթական գործը, իսկ հունական մասում այն արվում է մեծ դժվարությամբ: Սահակը թղթեր է գրում ինքնակալին և մի կերպ թույլտվություն ստանում հայերեն ուսուցանելու համար: Կրթության գործը հոգալու նպատակով այնտեղ է մեկնում Մաշտոցը՝ Վարդան զորավարի հետ մեկտեղ: Խորենացին այսպես է գրում. «Նա ոչ թե սովորեցնում էր որպես արվեստ, այլ աշակերտներին կարծես հոգի էր ներշնչում»: Ապա՝ նույն առաքելությամբ նա լինում է Գողթնում, Գարդմանքում, Գուգարքում, Տաշիրքում:

Ասպարեզ են գալիս առաջին գրական մարդիկ, որոնք Մաշտոցի և Սահակի օրհնությամբ մեկնում են Միջագետք, Եդեսիա, Բյուզանդիա՝ հմտանալու թարգմանական արվեստի մեջ և օտար լեզուներից գրքեր թարգմանելու հայերեն: Այդ խմբի մեջ են Եզնիկ Կողբացին, Ղևոնդը, Կորյունը, Հովհանը, Արծանը: Սկսվում է հայոց մշակույթի զարթոնքի շրջանը, որի առաջին մասնակիցներից էր և Մովսես Խորենացին: Սկսվում է հայ մշակույթի զարթոնքը, բայց դադարում է հայոց պետականության գոյությունը, նույն ժամանակ մեծն Սահակին փոխարինում է պարսիկների դրածո Շամուել (Շմուել) ասորի եպիսկոպոսը: Վախճանվում է 51 տարի հայրապետություն արած Սահակը, նրանից վեց ամիս անց՝ Մեսրոպը:

Այսքանից հետո էլ ինչ էր մնում պատմահորը, քան աղի արցունքներով ողբալու հայոց աշխարհի դառնապատիր բախտը:

Խորենացու առջև՝ որպես օրինակ, Աստվածաշնչից եկող ողբեր էին և ամենից առաջ՝ Երեմիայի ողբերը՝ *«Երեմիան ողբում է ժողովրդի ցավը»*, *«Ռաքելի ողբը»*, *«Ողբ Բաբելոնի վրա»*, որոնցից առաջինում կարդում ենք. «Սիրտս ճմլվում է և հոգիս հանգստություն չունի, որովհետև ես շեփորի ձայն լսեցի և պատերազմի ու թշվառության գույժ: Հարված հարվածի վրա եկավ. բողոք բարձրացրեք, քանզի ողջ երկիրն ավերակ դարձավ, վրանս հանկարծակի խորտակվեց, և քանդվեցին վրանիս վարագույրները: Մինչև ե՞րբ պիտի փախստականներ տեսնեմ, շեփորի ձայն լսեմ: Իմ ժողովրդի իշխաններն ինձ չճանաչեցին, որովհետև նրանք ոչ թե խելացի, այլ անմիտ որդիներ են. չարություն անելիս իմաստուն են, իսկ բարի բան կատարել չգիտեն» (*Երեմիայի մարգարեությունը*, Դ 19–22): Իսկ սա նշանակում է. «Վայ ընկավ մեր գլխի թագավորը, վայ մեզ, որովհետև մեղանչել ենք»:

Սրան ավելանում են *«Պողոս առաքյալի երկրորդ թուղթը Տիմոթեոսին»* և *«Հակոբոս առաքյալի ընդհանրական թուղթը»*: Պողոս առաքյալը հիշյալ թղթի «Վերջին օրեր» բաժնում գրում է. «Այս բանն իմացիր, որ վերջին օրերին չար ժամանակներ պիտի գան, երբ մարդիկ պիտի լինեն անձնասեր, փողասեր, հպարտ, ամբարտավան, հայհոյող, ծնողներին անհնազանդ, անշնորհակալ, անմաքուր, անհաշտ, անգութ, բանսարկու, անժուժկալ, դաժանաբարո, անբարեսեր, մատնիչ, հանդուգն, մեծամիտ, ավելի շատ հեշտասեր, քան աստվածասեր, մարդիկ, որ ունեն աստվածապաշտության կերպարանք, սակայն ուրացել են նրա զորությունը» (Գ 1):

Հակոբոս առաքյալն իր թղթի «Ազդարարություն հարուստներին» գլխում սթափության այսպիսի կոչ է անում: «Ուրեմն այժմ, հարուստներ, լացեք և ողբացեք այն թշվառությունների համար, որ գալու են ձեր գլխին, որովհետև ձեր հարստությունը փտած է, ձեր զգեստները՝ ցեցի կեր, և ձեր արծաթն ու ոսկին՝ ժանգոտած. և նրանց ժանգը ձեր դեմ որպես վկայություն պիտի լինի և պիտի ուտի ձեր մարմինը՝ ինչպես կրակը. վերջին օրերի համար գանձեր դիզեցեք» (Ե 1–3):

Եվ ահա այս ձայների բազմաձայնեցումով, իր ավերակ երկրի առջև կանգնած, Խորենացին ձայնարկում է. *«Ողբում եմ քեզ, Հայոց աշխարհ, ողբում եմ քեզ, բոլոր հյուսիսային ազգերի մեջ վեհագույնդ, որովհետև վերացան թագավորդ ու քահանադ, խորհրդականդ և ուսուցանողդ, վրդովվեց խաղաղությունը, արմատացավ անկարգությունը, խախտվեց ուղղափառությունը, հիմնավորվեց տգիտությամբ չարափառությունը:*

*....Ավաղ այս զրկանքներին, ավաղ այս թշվառ պատմության: Ինչպե՞ս դիմանամ այս ցավերին:*

*....Կառավարիչները կարգը չեն պահպանում, անողորմ են, սիրելիները դավաճանված են, թշնամիները զորացած, հավատը ծախվում է այստեղի ունայն կյանքի համար: Ասպատակություններ են գալիս անհատնում, շատ տեղերի վրա, տները գերվում են, ստացվածքները հափշտակվում, գլխավոր մարդիկ կապվում են, հայտնի անձերը բանտարկվում են, դեպի օտարություն են աքսորվում ազնվականները, անթիվ նեղություններ են կրում ռամիկները, առնվում են քաղաքները, քանդվում են ամրոցները, ավերվում են ավանները, հրդեհվում են շինությունները, անվերջ սովեր և հիվանդություններ և բազմատեսակ համաճարակներ: Աստվածապաշտությունը վերացված է, դժոխքի ակնկալություն»* (III, ԿԸ):

Այս էր Խորենացու տեսածը, ապրածը և մեզ ավանդածը: Այս «Ողբ»-ը հետագայում պետք է ունենար բազում ողբակիցներ, և ողբասացությունն անբաժան պիտի լիներ հայոց պատմությունից, ուստիև՝ հայ մարդու ճակատագրից:

Այդպես է, որովհետև Խորենացին տեսավ ու արձանագրեց այնպիսի բացասական, դրանով իսկ՝ մարդակործան և ազգակործան հատկանիշներ, որոնք, դժբախտաբար, բնորոշ են եղել մեր ժողովրդին նաև հետագա բոլոր ժամանակներում:

Խորենացու ողբը հայրենիքի անկման ողբն է, որովհետև ավարտվում էր մեր հայրենիքի պատմությունը՝ որպես պետություն, որպես երկիր, իսկ դրանից հետո արդեն գալու էր ժողովրդի պատմությունը, որի մասին ունեցած պատկերացումն ահա այն էր, ինչ արձանագրեց իր լալահառաչ տողերի մեջ:

Հաղթող ժողովուրդը, ինչպիսին էլ նա լիներ, այսպիսի ողբով չէր ավարտի իր պատմությունը, իսկ պարտվող ժողովուրդն սկսում է ամեն ինչի մեջ ինքն իրեն ստուգել, ինքն իրեն մեղադրել, մոռանալ իր առավելություններն ու առաքելությունները և մատնացույց անել միմիայն թերությունները:

Խորենացու *«Հայոց պատմությունը»* հայ ժողովրդի գոյաբանության, ազգաբանության, մշակութաբանության ամենամեծ հուշարձանն է: Պատմական իրադարձությունների և հայ մարդու նկարագրի ու տեսակի վերլուծությամբ, կռահումներով և առաջադրություններով այն ազգային գաղափարախոսության մի հարուստ շտեմարան է՝ որպես հայ ժողովրդի բոլոր սերունդների առջև բացված Ճանապարհի Գիրք:

**Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ,**
**բ. գ. դ., պրոֆեսոր**

# Ամարասի վանքը

↩ էջ 3, 4

Սակայն Հայաստանի դամբարանները, որ իրենց կառուցվածքով նմանվում են մատուռների, ավելի շատ տարբերվում, քան նմանվում են սիրիականներին: Իսկ 4-րդ դ. վերջում և 5-րդ դ. դամբարանների ճարտարապետությունը Հայաստանում դառնում է միանգամայն ինքնատիպ և սիրիականից տարբեր:

Եկեղեցու բեմի տակ գտնվում է Ս. Գրիգորիսի մատուռ-դամբարանը, որն արևելքից արևմուտք ձգվող ուղղանկյուն (1,90 × 3,75 մ), պայտաձև կտրվածքով թաղով միանավ դահլիճ է. այն արևելքում ունի խորշ և երկայնական պատերում՝ մեկական մուտք: Նախամուտքերի արևելյան պատերին քանդակված են ոճավորված արմավենիներ:

**Հերմինե ՍԱՀԱԿՅԱՆ**
**Պատմության և իրավագիտության մագիստրոս**



*ԱՐՑԱԽ... ԱՆԿԵԶ ՄՈՐԵՆԻ...*

*Անհայտ ռուս նկարիչ. սրբապատկեր. Անկեզ մորենի*

Վահագն Դավթյան

## Անկեզ մորենի

*Այրվում է, այրվում... Եվ բոցը բոսոր,*
*Կապույտ է ու հիր,*
*Այրվում է, այրվում... Եվ բոցը մորմոք,*
*Կարոտ է ու կանչ,*
*Անկեզ մորենին այրվում է, այրվում,*
*Եվ չկա մոխիր,*
*Չկա սպառում և չկա վախճան...*

*Եվ բոցերի մեջ հուրհրատում է*
*Աշխարհ մի հեռու,*
*Եվ բոցերի մեջ տեսիլք է վառվում*
*Կապույտ ու կանաչ,*
*Արևածագ է բռնկվել, ասես*
*Ձյունոտ լեռներում,*
*Եվ հովիտն ի վար ցոլանք է ցանած:*

*Եվ հովիտն ի վար ծփում է խաղաղ,*
*Արևոտ մի ծուխ,*
*Մի մայր արագիլ ճաճանչն ուզում է*
*կտուցին առնել,*
*Բոցերի նման կարմիր ծիերն են*
*Այստեղ արածում,*
*Եվ արածում են սպիտակ գառներ:*

*Եվ բոցը դողում, գալարվում է բոցն*
*Ու ողջը ջնջում,*
*Եվ բոցը նորից դառնում է մորմոք*
*Ու անշեջ կրակ,*
*Եվ բոցի միջից մի զարմանալի*
*Բարբառ է հնչում,*
*Եվ ծավալվում է մի սուրբ պատարագ:*

*Ծավալվում է նա, իջնում ամայի*
*Դաշտին ու հանդին,*
*Ծավալվում է նա, խունկի պես օծում*
*Մասունք ու ածյուն,*
*Ծավալվում է նա այրված ու ծարավ*
*Այն անապատին,*
*Որ իր հրեղեն ողբն է հառաչում:*
*Եվ այրվում է նա... Եվ բոցը բոսոր,*
*Կապույտ է ու հիր,*
*Այրվում է, այրվում... Եվ բոցը մորմոք,*
*Կարոտ է ու կանչ,*
*Անկեզ մորենին այրվում է, այրվում,*
*Եվ չկա մոխիր,*
*Չկա սպառում և չկա վախճան...*

*Աստվածաշունչ՝ գիրք գրոց*



Տիրոջ հրեշտակը երևաց նրան մորենու միջից կրակի բոցով: Մովսեսը տեսնում էր, որ մորենին հրով վառվում էր, բայց չէր այրվում: Մովսեսն ինքն իրեն ասաց. «Գնամ տեսնեմ այս մեծ տեսարանը: Ինչպե՞ս է, որ մորենին չի այրվում»: Երբ Տէրը նկատեց, որ Մովսեսը տեսնելու համար մոտ է գնում, մորենու միջից ձայն տուեց նրան ու ասաց. «Մովսե՛ս, Մովսե՛ս»: Սա ասաց. «Ի՞նչ է»: Ապտուած ասաց. «Մի՛ մոտեցիր այստեղ: Կոշիկներդ հանի՛ր քո ոտքերից, որովհետև այն վայրը, ուր կանգնած ես դու, սուրբ հող է»:

Ելք. Գ 2–5

**ՏՕՆՔ ԵՒ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ**

**ՀՈԿՏԵՄԲԵՐ**

† Տօն է Վարագայ Սրբոյ Խաչի — *1 հոկտեմբերի*

† Սրբոց թարգմանչաց վարդապետացն մերոց — *14 հոկտեմբերի*

† Գիւտ Ս. Խաչի — *29 հոկտեմբերի*

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
**Գլխավոր խմբագիր՝**
Նարինե Հովհաննիսյան
**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հեռախոս՝ (010) 517 280**
**Էլ. փոստ՝**
qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
**web կայք՝**
**krishayas.wordpress.com**
**etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan**
Ստոր. տպագր. 13.03.2024 թ.
**Տպաքանակը՝ 1265**